№ 265 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 265

Տարեկան գինը 10 ռուբլի. Իսկ 7 ամսվանը 6 [illegible] տարվանը
Առանձին համարը [illegible] ռուբլի:
Թիֆլիսում [illegible] համարը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Մեր [illegible] գրվում են խմբագրատանը:
[illegible] հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE ST LAZARE

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ
(45-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը 10 ռուբ.	10 ամիսը 9 ռուբ.	9 ամիսը 8 ռուբ.	8 ամիսը 7 ռուբ.	7 և 6 ամիսը 6 ռուբ.	Այնուհետեւ ամսական Մէկ ռուբլի:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 ռուբլի:

Յայտարարութիւններ [illegible] յաջորդական: Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ:

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ:

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նոյեմբերի 28-ին վախճանվեց

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆԸ

Այդ մասին խորին վշտով յայտնում են նրա կինը և զաւակները: Հոգեհանգիստը չորեքշաբթի, դեկտեմբերի 2-ին, երեկոյեան ժամը 6-ին, հանգուցեալի բնակարանում (Սեմեոնովսկայա փող. № 23, բնակարան 6):
875. 2—1

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԸ գուժելով մահվան բօթը վաստակաւոր մանկավարժ

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ,

Սալոնի յարգանօք հրաւիրում է բազմերախտ ուսուցչապետի ընկերակիցներին, աշակերտներին, հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներին և հանգուցեալի երախտիքը ճանաչողներին այսօր, երեքշաբթի, երեկոյեան ժամը 8-ին շնորհ բերել Գրական-Գեղարուեստական Սալօնը հանգուցեալ ուսուցչապետի Թաղման շուրջ խորհրդակցելու և ներկայ լինելու հոգեհանգստին:
Ոչ ոքի առանձին հրաւիրագիր չէ ուղարկվում:

ԲՍԱԿ
(ՏՈՊՐԱԿ)

Կովկասեան բանակի զինուորների ծննդեան ընծայ

Կովկասի Փոխարքայի Օգոստափառ ամուսինը՝ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի ԱՆԱՍՏԱՍԻԱ ՆԻԿՈԼԱՅԵՎՆԱՆ կազմակերպում է ուղարկել կովկասեան բանակի զինուորներին Ծննդեան ընծաներ՝ «բսակներ» (տոպրակներ):

Իւրաքանչիւր նուիրատու կը տայ մեր հերոս զինուորներին ընծայ, որը կը յիշեցնէ պատերազմողին, որ Քրիստոսի Ծննդեան մեծ տօնին յիշում են նրան ամեն մի գերդաստանում:

Նուիրաբերութիւնները ընդունվում են շնորհակալութեամբ, որոնք լինելու են միմիայն՝ թաշկինակներ, պօստի թղթեր, մատիտներ, սապոն, ծխախոտ, նաբաթ (леденцы) և լուցկի:

Այն անձանց, որոնք կը բարեհաճեն նուէրներ տալ պատրաստի բսակներով, խնդրում են, որպէս զի չը լինի տարբերութիւն քանակի և մեծութեան մէջ, նրանց ամեն մէկի մէջ դնել՝ մի թաշկինակ, հինգ թերթ պօստի թուղթ, հինգ ծրար, մէկ մատիտ, ¼ ֆունտ ծխախոտ, ¼ ֆունտ նաբաթ (леденцы), մէկ տուփ լուցկի և սապոն:

Բոլոր այդ նուէրները, ըստ յանձնարարութեան Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխանուհի ԱՆԱՍՏԱՍԻԱ ՆԻԿՈԼԱՅԵՎՆԱՅԻ, ընդունում է գեներալ-լէյտենանտ բարոն Ստալը իւրաքանչիւր օր ժամը 2-ից մինչև 4-ը ցերեկվայ, Երմոլովսկայա փող. № 9, կարելի է ուղարկել և պօստով միևնոյն հասցէով: տառ. 868. 1—1

Առևտրական Տուն Ս. Հախնազարեանց, Ա. Սրեանց, Ա. Ներսիսեանց և Ընկերութեան ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ գրասենեակի համար հարկաւոր է մի փորձառու

ՀԱՇՒԱՊԱՀ

Ցանկալի է, որ լինի ագուլիսեցի և մի քանի տարի նոյն պաշտօնը վարած ուրիշների մօտ: Պայմանների համար դիմել Ընկերութեան՝ Վերին-Ագուլիս, հեռագիր — Верхніе Акулисы, Ахабнерко.
(օ. մ.) տառ. 869. 3—1

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Թոքատցի Ցարութիւն Մուրադեան, որ Սամսոնէն Բաթում գալով Սուխում մեկնած է, իսկ հիմա տեղը անյայտ: Սոյն անձը ճանչցողներէ և տեղը գիտցողներէ կը խնդրուի բարի լինել հետեւեալ հասցէին լուր տալ.
Բաթում, Գէորգ Ազըլեան
Լորիս-Մելիքովսկայա ուլիցա № 35.
տառ. 864. 3—2

Ներքին հիւանդութեանց
ԲԺԻՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱՔՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան: ՉՈՐԵՔՇԱԲԹԻ առ. ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская, 23. тел. 7—29.
տառ. (տ. օ.) 504. 100—99

ԲԺՇԿՈՒՀԻ
Շուշանիկ Նաթարեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը:
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սոլոլակ, Ռուդչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(և.հ.կ.) տառ. 634. 100—34

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով:
Առաւօտեան ժամը 10—12-ը:
Երեկոյեան » 5—7-ը:
Бебутовская ул. № 26. 3-րդ գիմնազիայի կողքին:
տառ. 779. 50—27

Թիֆլիսից 10 վերստ հեռաւորութեան վրա գտնվող
Տաբախմելա գիւղում
նոր բացվող ՄԱՆԿԱՆ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր է ՄԻ ՎՐԱՑԱԽՕՍ
ՎԱՐԺՈՒՀԻ
Պայմանների մասին դիմել պ. Նիկ. Մաթինեանին՝ Ольгинская ул № 3, տ. Մելիք-Ասլանեանցի, առաւ. ժամը 10—11-ը:
Հոգաբարձութիւն
տառ. 873. 3—1

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՕՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը: Սերգիեվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67:
տառ. 753. 50—34

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
27—28 նոյեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Թիւրքիայում փոփոխութիւն չը կայ: Պարսկաստանում՝ Թեհրանի և Համադանի կէս ճանապարհի վրա՝ մեր զօրքերը ջարդեցին թիւրք-գերմանական զօրաբաժին, որ բաղկացած էր մի քանի հազար ապստամբ պարսիկ ժանդարմներից և զինված հրոսակախմբերից թնդանօթներով ու գնդացիրներով: Հակառակորդը, վանվելով մի շարք դիրքերից, կորցնելով մեծ թւով սպանված և վիրաւոր, փախաւ:

ՊԱՐԻԶ. — Դարդանէլի զօրաճակատ: Նոյեմբ. 22-ին թշնամին փորձեց առաջանալ, բայց մեր կրակից իսկոյն կանգ առաւ: Նոյեմբ. 23-ին խրամատային աջող կրակը ճեղք բացեց թշնամու զօրագծերում և պայթում առաջ բերեց թիւրքական ռազմանիւթի պահեստում: Թշնամին պատասխանեց ուժեղ թնդանօթային կրակով, որ ոչ մի վնաս չը պատճառեց:

Մարմարա ծովում անգլիական մի սուզանաւ ջրասուզեց թիւրքական «Եարհիսար» հականականաւը և գերեց 2 օֆիցեր և 40 զինուոր.

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.— Անատոլիայի ջրերում գտնվող մեր ռազմանաւերը ջրասուզեցին թիւրքական 2 մեծ առագաստանաւ. նաւաստիները գերվել են:

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից:

Դէպի Համադան դիմող ճանապարհի վրա մեր զօրքերը, նախօրեակին ջարդած թիւրք գերմանական զօրաբաժինը հետապնդելիս, գրոհ տալով ձեռք ձգեցին թշնամու մի ամուր դիրք Սուլթան-Բուլաղի լեռնանցքում.

Ծովի վրա նոյեմբերի 27-ին Կեֆկէն կղզու մօտ, Բոսֆորից դէպի արեւելք մեր 3 ականանաւ թնդանօթաձգութիւնից յետոյ ոչնչացրին «Բուրակեյա» և «Մալատիա» տիպի թիւրքական երկու ռազմանաւ, որոնք թիւրքաց կառավարութեան պատւէրով կառուցվել էին ֆրանսիական նաւաշինարաններում, 1913 և 1907 թ.թ.: Մենք կորուստներ չունեցանք. Ականակիրները ընկղմել են նաև մի մեծ առագաստանաւ:

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Սև ծովի ափին Վոֆից դէպի հարաւ-արեւմուտք, թիւրքերը փորձեցին առաջանալ, բայց բոլոր փորձերը խափանվեցին խոշոր կորուստներով.

Համադանի ճանապարհին մեր զօրքերը, հետապնդելով փախչող թշնամուն, առաջացան դէպի Սուլթան-Բուլաղի լեռնանցքը:

ՊԱՐԻԶ.— Հաղորդագրութիւն Դարդանէլում տեղի ունեցող ռազմի գործողութիւնների մասին.

Նոյեմբերի 24-ին, 25-ին և 26-ին թիւրքերը շարունակ ամբակոծում էին եռանդով մեր առաջին շարքի դիրքերը: Ականային կռիւը վերսկսվեց նոր ուժով:

Թիւրքաց մի աէրօպլան նոյեմբերի 25-ին անաջող կերպով ռումբեր նետեց Սէդիլ-Բահրի մօտ մեր պահակադիրքերի վրա:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
27—28 նոյեմբերի

ՍՈԼՈՒՆ.— Ամբողջ անգլօ-ֆրանսիական զօրաճակատի վրա սկսվում է հանդարտ գործունէութիւն:

ՑԵՏԻՆԻԷ.— Պաշտօնապէս հաղորդվում է, որ թշնամին նոյեմբ. 24-ին եռանդով յարձակում գործեց Սանջակի մեր զօրքի վրա, բայց ամենուրեք վանվեց:

Մի քանի օրվայ կռիւներից յետոյ աւստրիացիք գրաւեցին Իփէկը:

ՊԱՐԻԶ.—Անգլօ-ֆրանսիական զօրքերը գրաւում են աւելի յարմար դիրքեր:

Բուլղարական զօրքի գլխաւոր շտաբը գտնվում է Իշտիբում:

Բուլղարները զօրաճակատի զանազան մասերում գործեցին կատաղի յարձակումներ, որոնք բոլորն էլ վանվեցին թշնամու համար ծանր կորուստներով: Վարդարում կռիւը շարունակվում է:

ԼՈՆԴՈՆ.—Զինւորական մինիստրութիւնը յայտնում է.

Կատաղի ամբակոծութիւնից յետոյ, նոյեմբ. 23-ին բուլղարները յարձակում գործեցին մեր զօրքերի վրա Դոյրանի լճից դէպի արևմուտք. փոքրաթիւ զօրամասերին աջողվեց ներս խուժել մեր առաջին կարգի խրամատները, բայց նրանք իսկոյն վանվեցին սուիններով: Նոյեմբերի 24-ին բուլղարները նորից յարձակում գործեցին մեզ վրա և թւական գերազանցութեան պատճառով մեզ ետ մղեցին մեր դիրքից: Միութեան մէջ մեր զօրքերը ետ քաշվեցին դէպի նոր զօրագիծ: Կորուստների մասին տեղեկութիւն դեռ ստացված չէ: Նոյեմբ. 25-ին անգլիական զօրքերը աջողութեամբ վանեցին թշնամու բոլոր յարձակումները և երեկոյեան դէմ ետ քաշվեցին դէպի նոր դիրք՝ իրանց դրութիւնը զօրաճակատի ընդհանուր զօրագծի հետ համաձայնեցնելու համար:

ՍՈԼՈՒՆ.—Բուլղարները փորձեցին նոյեմբ. 25-ին գործունէութիւնը զարգացնել, բայց անհետեւանք:

Սկսած Կոստուրինի մօտից մինչև Վարդար անընդհատ հրացանաձգութիւն է և ամբակոծութիւն:

Անգլօ-ֆրանսիական զօրքերը սակրաւորական նկատառումներով հեռացան հիւսիսային և արևելեան զօրաճակատներում վաղօրօք պատրաստված դիրքերը:

Ֆրանսիացիք հեռացան Կավադարից, Կրիվոլակից և Դեմիրկափուից, հանեցին տարան ամբողջ ռազմանիւթը, ռումբերը և ուտելիքը և պայթեցրին Դեմիրկափուի տունէլն և Վարդարի կամուրջը:

Նոյեմբ. 25-ին ֆրանսիական զօրաճակատի վրա ուժեղ կռիւը շարունակվեց մինչև կէս գիշեր: Բուլղարական բոլոր յարձակումները վանվեցին:

ՑԵՏԻՆԻԷ.— Դուբրովիչայի յայնկոյս մենք նոյեմբ. 25-ին վանեցինք թշնամու եռանդուն յարձակումները, որ կրեց մեծ կորուստներ: Մենք գերեցինք հարիւրաւոր մարդ:

Աւստրիական աէրօպլանները ռումբեր նետեցին Ցետինիէի և Սկադրի զօրանոցների վրա, բայց անհետեւանք:

ԱԹԷՆՔ. Բուլղարների բոլոր յարձակումները դաշնակիցների զօրաճակատի վրա վանվեցին:

ՊԱՐԻԶ.—Երբ պարզվեց, որ սերբ զօրքի աջ զօրաթևի հետ անկարելի է միանալ, զօրահրամանատարը վճռեց թողնել մեր զօրքերի գրաւած դիրքերը Ցրնայի վրա և Կրիվոլակի ուղղութեամբ. նահանջը կատարվեց լիակատար կարգով, առանց որևէ դժուարութեան, չը նայած որ բուլղարները յարձակվեցին մեզ վրա մի քանի անգամ:

Նոյեմբ. 21-ին և 26-ին տեղի ունեցած յամառ կռիւներից յետոյ, որոնց ժամանակ բուլղարները կրեցին խոշոր կորուստներ, մենք գրաւեցինք նոր զօրագիծ, որ մտնում է մօտաւորապէս Բօժիմիա գետին և միանում է անգլիական զօրքերի զօրաճակատի հետ:

ՊԱՐԻԶ.—«Տանը» գրում է. «Դաշնակիցները վճռել են մնալ Սոլունում և ուղարկել այնտեղ այնքան զօրք, որպէսզի կարելի լինի նպաստաւոր պայմաններում վերսկսել արշաւանքը: Այդ վճիռը անվերադառնալի է»:

ԱԹԷՆՔ.—Սերբ զօրքերը Մօնաստիրից գնդապետ Վասիչի հրամանատարութեամբ, վանելով բուլղարների յարձակումը, վերջացրին իրանց նահանջը Ալբանիա:

ՊԱՐԻԶ.—Նոյեմբ. 27-ին բուլղարները յարձակումներ էին գործում ֆրանսիական զօրքերի վրա համարեա ամբողջ զօրաճակատի վրա, բայց բոլոր յարձակումներն անաջող անցան:

ՑԵՏԻՆԻԷ.—«Պրէսս Բիւրօն» յայտնում է նոյեմբ. 26-ից, որ թշնամին նորից եռանդով յարձակում գործեց Մատարուժէի մօտ մեր դիրքերի վրա. մենք վանեցինք յարձակումը և գերեցինք 30 մարդ:

Սէնիցա-Բրոդարեվա ուղղութեամբ կռիւները շարունակվեցին ամբողջ օրը:

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
28—29 նոյեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Երէկ հակառակորդը փորձեց առաջանալ Կուպչինցէ շրջանից, Տարնօպօլից դէպի արևմուտք, բայց վանվեց և քշվեց իր խրամատները:

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Գալիցիայում, Ստրիպա գետի մօտ, Մարիանկա, Իւզէֆօվկա և Բէնիլավա գիւղերի շրջանում, Տարնօպօլից դէպի հարաւ-արևմուտք, հակառակորդի մանր զօրամասերը առաջանում էին, բայց վերջ ի վերջոյ մասամբ ոչնչացան, մասամբ գերվեցին:

ԱԹԷՆՔ.—Գերմանական մի սուզանաւ Աղէքսանդրիայի մօտ ջրասուզել է յունական մի նաւ և անգլիական մի ռազմանաւ. երկու նաւերի նաւաստիները բերվել են Աղէքսանդրիա:

ԼՈՆԴՈՆ.—«Բուզիրիս» նաւը ջրասուզվել է. նաւաստիներն ազատվել են:

ՊԱՐԻԶ.—Ամբողջ զօրաճակատի վրա շարունակվում է երկուստեք ուժեղ ամբակոծութիւն:

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
27—29 նոյեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Բարձրագոյն հաստատվեց մինիստրների խորհրդի որոշումը՝ ստուգիչ բժշկական քննութեան ենթարկելու այն անձանց, որոնք ճանաչվել են բոլորովին անպէտք զինուորական ծառայութեան համար:

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ.—Եսէնտուկում օծվեց Կարմիր Խաչի նոր բացված սանատորիան, ուր պէտք է ընդունվեն 150 հիւանդ օֆիցեր:

ՊԱՐԻԶ.—Յունաց միսիան հերքում է, թէ իբր ծովային նախկին մինիստր Ստրատոսը մեկնել է Բեռլին՝ Յունաստանի համար փոխառութիւն խնդրելու յանձնարարութեամբ:

ՊԱՐԻԶ.—Կօնստանը հարցապնդում է այն պատճառների մասին, որոնք դրդեցին կառավարութեանը նշանակել գեներալիսիմուս: Բրիանը, մատնանշելով որ այդ հարցի քննութիւնը ներկայումս անյարմար է, հրաժարվում է պատասխանել և դնում է վստահութեան հարց: Պալատը 443 ձայնով ընդդէմ 98-ի յետաձգում է հարցի քննութիւնը:

Երէկ արտաքին գործերի մինիստրութեան մէջ կայացաւ համաձայնութեան պետութիւնների նոր զինուորական խորհրդի նիստը ներկայութեամբ Բրիանի, Գալիէնիի, Լակազի, Ռուսինի, Գրէյի, Կիտչեների, Ժոֆֆրի և մեծ-բրիտանական դեսպանի:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պօլսից հաղորդում են, որ ժողովրդի և երիտասարդ թիւրքերի կոմիտէի անդամներից մի քանիսի ատելութիւնը գերմանացիների դէմ սաստկանում է: Թիւրքերը չեն կամենում, որ գերմանական զօրքերը Կ. Պօլիս գան, և բացարձակօրէն յայտնում են, որ կարիք ունեն թնդանօթների, ռազմամթերքի և դրամի, բայց ոչ գերման զօրքերի:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.— Ռօտէրդամից հաղորդում են, որ Նամիւրի բերդերից մէկը ոչնչացաւ պայթումից. 80 գերմանացի զինուոր սպանվել են:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—«Ինդէպանդանս Ռումէնը» հաղորդում է, որ ալիւրավաճառների ռումինական սինդիկատը թոյլտուութիւն է ստացել Թիւրքիա արտահանել 1000 վագոն ալիւր:

ՊԱՐԻԶ.—Աթէնքից Հաւասի գործակալութեանը տեղեկացնում են, որ մինիստր-նախագահը նոյեմբ. 25-ին ընդունեց ռուս-

սաց և իտալական դեսպաններին: Կարծում են, որ այդ այցելութեան նպատակն էր յայտնել յոյն կառավարութեանը, որ Ռուսաստանը և Իտալիան նոյնպէս միանում են ֆրանսիացիների և անգլիացիների պահանջին՝ ներկայացնել երաշխիքներ Սոլունում գտնվող դաշնակից զօրաբաժնի վերաբերմամբ:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Բեռլինից հեռագրում են, որ հաշտութեան մասին սօցիալիստների ուղղած հարցապնդմանը կանցլերը պատասխանեց մի ճառով, որի մէջ ասաց, որ պատերազմը կը վերջանայ հաշտութեամբ, երբ մարդկային նախատեսութեան չափով Գերմանիան երաշխաւորված լինի, որ պատերազմը չի կրկնվի ապագայում:

ՊԱՐԻԶ.—Պուանկարէն ընդունեց Գրէյին և Կիտչեներին:

Դաշնակից պետութիւնների ներկայացուցիչները նորից խորհրդակցութիւն ունեցան երէկ առաւօտ արտաքին գործերի մինիստրութեան մէջ: Ներկայ էին Գրէյը և Կիտչեները:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Եկաւ գեներալ Պօն, որ գնում է Պետրօգրադ:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Վերջին տեղեկութիւնները համաձայն, ֆրանսիական և անգլիական զօրամասերը ափ են իջել Սանտի-Կվարանտայում: Այնտեղ են գնում նաև իտալական զօրքերը Բարրից:

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Միացեալ Պետութիւնների և Աւստրիայի դիւանագիտական յարաբերութիւնները սպառնում են խզվել ամերիկեան կառավարութեան կողմից այն դէպքում, եթէ աւստրո-ունգարական կառավարութիւնը չընդունէ «Անկօնայի» ջրասուզելը անկանոն և չը տայ բաւարարութիւն:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Պարլամենտի նիստում Տակիօնէսկուն հարցապնդեց մինիստր-նախագահին Ռումինիայի արտաքին քաղաքականութեան մասին, որպէսզի պարզ լինի, թէ ինչ դրդապատճառներից Ռումինիան հանդէս չեկաւ այն րօպէին, երբ Բօլգարիան յարձակվեց Սերբիայի վրա: Իր պատասխանի մէջ Բրատիանուն ասաց, որ Տակիօնէսկուի հարցապնդումը համարում է քաղաքական ցոյց և, հետևաբար, չէ կարող պատասխանել նրան պարլամենտում: «Ամբողջ երկիրը կը հասկանայ,—ասաց նա,—թէ ինչու ես չեմ պատասխանում այդ հարցին»:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Բեռլինից ստացված կիսապաշտօնական տեղեկութեան համաձայն, Միացեալ Պետութիւնների կառավարութիւնը ցանկութիւն է յայտնել գերմանական կառավարութեանը, որպէսզի ետ կանչվեն Վաշինգտօնից՝ գերմանական դեսպանատանը կից պաշտօնավարող ծովային և զինւորական գործակալները:

ԼՕՆԴՕՆ.—«Դէյլի-Մէյլին» Պարիզից հեռագրում են, որ Ֆրանսիայի և Մեծ-Բրիտանիայի միջև բալկանեան արշաւանքի հարցի առիթով ծագած տարաձայնութիւնները Գրէյի և Կիտչեների գալուց յետոյ վերջացան: Այդ երկու մեծ պետութիւնների հայեացքների լիակատար միաբանութիւնը յանգեց այն կէտին, որ աւելի կարաւէ ազդեցութիւն եղաւ Յունաստանի վրա: Սոլունը վճռված է պահել: Դաշնակիցները վճռեցին ցրել այն կասկածները, որ գոյութիւն ունէին Կօնստանտին թագաւորի մտադրութիւնների նկատմամբ: Հաւանական է համարվում, որ Աթէնքում արդէն յանձնված է հաւաքական նոտա, որ պահանջում է անյապաղ ու պարզ պատասխան:

ԿՈՊԵՆ ՀԱԳԵՆ.—Շվէյցարիայի վրայով այստեղ ստացված տեղեկութիւնների համաձայն, Բուդապեշտում պարլամենտի շէնքեան առաջ տեղի է ունեցել հսկայական ցոյց յօգուտ հաշտութեան:

Պատգամաւորների պալատի նախագահին ներկայացվել է մի ուղերձ 10,000 ստորագրութիւններով, որով պահանջվում է կնքել անյապաղ հաշտութիւն: Ոստիկանութիւնը ուժով ցրել է ցուցարարներին և կատարել է շատ ձերբակալութիւններ:

ՄԻՆՍԿ.—Պատերազմի 16 ամիսների ընթացքում Մինսկի նահանգով տարել են 3341 օֆիցէր և 221,402 զինւոր գերի:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը յատկացրեց 5 միլիօն ր. Տաւրիդայի կոմիտէի ծախքերի համար, 50 միլիօն ր. ներքին գործերի մինիստրութեանը՝ փախստականների կարիքների համար: Մատակարարական խորհրդակցութեանը մինիստրների խորհուրդը յատկացրեց 5 միլիօն ր., որպէսզի փոխարինաբար տրվի զեմստվային և քաղաքային հաստատութիւններին՝ կենսական մթերքներ գնելու համար, և 15 միլիօն ր.՝ ազգաբնակութեան մատակարարական կարիքները բաւարարելու համար:

Նոյեմ. 1-ին եկեղեցական ափսէով պատերազմական ծախքերի համար հանգանակվել է 3 միլիօնից աւելի ռուբլի:

Ի նկատի ունենալով, որ Թուրքեստանի երկիրը լցվել է փախստականներով, ներքին գործերի մինիստրութիւնը հրահանգեց փախստականներին տեղաւորող նահանգապետներին և գլխաւոր լիազօրներին՝ այլևս այնտեղ չուղարկել փախստականներ:

Առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրը նոյեմ. 22-ին հրատարակեց նոր որոշումներ, որոնց համաձայն բուրդ լուացող գործարանների և բրդի ֆաբրիկաների տէրերը պարտաւոր են տեղեկութիւններ տալ իրանց մօտ գտնվող պահեստների մասին:

Ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զեկուցագրի վրա Նորին Մեծութիւնը բարեհաճեց սեփական ձեռքով մակագրել.

Շնորհակալ եմ հաւատարիմ հպատակութեան զգացմունքների համար և հաւատում եմ, որ Պետրօգրադի քաղաքային ինքնավարութիւնը, չը սուրվելով համապետական քաղաքականութեան հարցերով, ամէն ջանք գործ կը դնէ ծառայելու Ինձ և հայրենիքին կենդանի աշխատանքով՝ յօգուտ մայրաքաղաքի ազգաբնակութեան ներկայ ծանր ժամանակ:

ԱԹԷՆՔ.—Հեղինակաւոր աղբիւրից հաղորդում են, որ համաձայնութեան պետութիւնների և յունաց կառավարութեան միջև բանակցութիւնները մօտ են հարթելու այն զինւորական հարցերը, որոնք կապ ունեն Սոլունում ափ հանված զօրքերի հետ:

Որովհետև Բօլգարիան մերժեց Յունաստանին փոխադրել ռուսական պօստը, ուստի Ռուսաստանի հետ պօստային հաղորդակցութիւնը այսուհետև կատարվելու է Բալտիկ ծովով:

ՍՕԼՈՒՆ.—«Օպինիօն» լրագրին ֆրանսիական աղբիւրից հաղորդում են, որ նոյ. 26-ին դաշնակից և յունական զօրքերի գլխաւոր շտաբների ներկայացուցիչների խորհրդակցութեան ժամանակ ընդդպետ Պալլիսը յայտնեց, որ եթէ բօլգար զօրքերը հարկաւոր գտնեն անցնել Յունաստանի սահմանը՝ դաշնակից զօրքերին հետապնդելու համար, այն դէպքում, երբ վերջինները մըտնեն յունաց երկրի սահմանները, յոյն զօրքը, ի խուսափումն ամէն տեսակ վտանգաւոր դիմադրութեան, կը նահանջէ բօլգարների առաջ:

ՀՌՕՄ.—Եկաւ Միացեալ Պետութիւններից Կարմիր Խաչի խումբը, բաղկացած 12 բժիշկներից և 20 գթութեան քոյրերից, որ գնում է Սերբիա:

ՊԱՐԻԶ.—Ժօֆֆրը գլխաւոր շտաբի պետ նշանակեց գեներալ Կաստէլնօյին:

Կիտչեները և Գրէյը երէկ մեկնեցին Պարիզից:

Ծովակալ Ռուսէնը երէկ ընդունվեց Պուանկարէից:

ՆՈՐ ԶԻՆՈՒՈՐԱԿՈՉՈՒԹԻՒՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Զինւորական վարչութեան ծառայութեան կողմից:

Համաձայն 1915 թ. նոյեմբերի 20-ի Բարձրագոյն հրամանի, 1916 թւին իր ժամանակին հրատարակվելիք ժամանակամիջոցում, պէտք է զէնքի կանչվեն 1918 թ. նորակոչները, այսինքն 1897 թւին ծնված երիտասարդները:

Այդ զինւորակոչութիւնը, 1917 թւին ծառայութեան կանչվող երիտասարդների նըման, կատարելու են գաւառական և քաղաքային զինւորակոչութեան ատեանները ըստ զէնքի կանչվողների բնակութեան տեղերի:

Ոչ մի ընտանեկան և ուսուցչական արտօնութիւն, կամ թէ՝ նորակոչների պաշտօնը և կոչումը նկատի առած՝ որևէ ժամանակամիջոց չի տրվելու, բացի ստորև յիշվածների:

Զինւորական ծառայութեան պիտանի ճանաչվածները՝ բոլորը անխտիր պէտք է ընդունվեն ծառայութեան անկախ նրանց ընտանեկան դրութիւնից: Նրանք, որոնք կը ճանաչվեն ըստ ընտանեկան դրութեան առաջին կարգի, կը համարվեն երկրորդ կարգի երկրապահներ և կը կանչվեն ծառայութեան, եթէ պիտանի երևան, երբև երկրապահներ զէնքի կանչվողների միւսների հետ միաժամանակ, ըստ որում այդ տեսակ անձանց զինւորական ծառայութեան տանելու ժամանակ նրանց ընտանիքներին կը տրվի ապրուստի միջոց:

Այն անձինք, որոնք ուսանում են պետութեան բարձր և միջնակարգ կրթական հաստատութիւններում (որոնց մասին յիշատակված է զինւորական կանօնադրութեան 76-դ, 77-դ 78-դ և 79-դ յօդուածներում: ժամանակամիջոց ստանալու համար պէտք է ոչ ուշ քան մինչև 1916 թւի յունվարի 1-ը, ներկայացնեն գաւառական և քաղաքային զինւորակոչական ատեաններին պատշաճ յայտարարութիւններ վաւերագրերով հանդերձ: Ատամնաբուժարաններում գտնվող ուսանողները կարող են ժամանակամիջոց ըստանալ միայն այն դէպքում, եթէ մտել են այդ դպրոցները 1914 թ. հոկտեմբերի 1-ից առաջ:

Օտարերկրեայ կրթարաններում ուսանողներին և պետութեան համալսարաններում գտնվող ազատ ունկնդիրներին ժամանակամիջոցներ չեն տրվելու:

Պետական պաշտպանութեան հաստատութիւններում աշխատող անձինք պէտք է ներկայանան միւսների օրինակով զինւորակոչութեանը, բայց նրանք, որոնց իրաւունք կը տրվի մնալ զինւորական ծառայութեան, անյապաղ կարձակվեն իրանց ծառայութեան տեղերը:

ԴԷՊՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

27—28 նոյեմբերի

ԹԷՀՐԱՆ.—Ռուսաց զօրքերը գրաւեցին Սուլթան-Բուլաղ լեռնանցքը, որի վրա ժանդարմները և գերմանական վարձկանները երկու շաբաթ շարունակ ամրանում էին գերմանացի և թիւրք օֆիցէրների ղեկավարութեամբ: Ճանապարհը դէպի Համադան բաց է: Հակառակորդը անկարգ փախչում է, հետապնդվելով ռուս զօրքերից:

Սուլթան-Բուլաղի գրաւումը սարսափ է ձգել Համադանում: Գերմանական վարձկան՝ այսպէս կոչված մուջահիդները թագնվել են: Համադանի բնակիչները, որոնք դեռ երէկ հեռագիր էին ուղարկել Թէհրան պահանջելով կառավարութիւնից՝ յայտարարել պատերազմ Ռուսաստանին, եկան հետադարձ իրանց ստորագրութիւնները ոչնչացնելու համար: Ճիշդ հրաժանգից Դէմարէն այսօր փութանակի դուրս է տանում Համադանից Շահնշահի բանկի բաժանմունքներում գտնված գումարները:

Լուր է պտտվում, թէ բախտիարների, գերմանացիների և նրանց կողմնակիցների միջև ծագած երկպառակութիւններին հետևել են բացարձակ ընդհարումներ: Սպահանում բախտիարները շրջապատել են գերմանական աւագ հիւպատոս Պուժէնի տունը և պահանջել են յանձնել նրա ժողոված գումարները և կողոպտած իրերը: Պարսից պրինցուհի Դանա-Ուլմի հովանաւորութեան ներքոյ գտնվող Պուժէնը շրջապատվեց ժանդարմներով և, երբ բախտիարները պահանջեցին նրանից անձնատուր լինել կէս ժամվայ ընթացքում, փախաւ մզկիթ:

Այն լուրերի պատճառով, թէ տարաձայնութիւն է ակսվել թիւրքաց դեսպանի և պրինց Րէյսի միջև, գերմանական միսիան հերքում է պարսից լրագիրներում:

Կումում մնացած պատգամաւորները, որոնք նոյնպէս Գերմանիայի կողմնակիցներից են, հեռագրեցին մինիստրների խորհրդին, թէ նրանք Թէհրան կը վերադառնան այն պայմանով, եթէ կաբինէտի կազմից դուրս գան Ռուսաստանի և Անգլիայի կողմնակիցները, և բացէ ի բաց սպառնում են պատերազմով, եթէ Պարսկաստանը համաձայնութիւն կապէ Ռուսաստանի հետ:

ԹԷՀՐԱՆ.—Տեղիս լրագիրները լի են Համադանի ճանապարհի վրա տեղի ունեցած կռիւների մանրամասնութիւններով: Մայրաքաղաքի եւրոպական և հայ ազգաբնակութիւնները, նաև մեր պարսիկ բարեկամները ցնծութեան մէջ են: Ամէն մի մանրամասնութիւն կռիւների մասին յափշտակութեամբ է լսվում: Մեր հակառակորդները ուղղակի գլուխները կորցրել են:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՆՑԼԵՐԻ ՃԱՌԸ ՌԱՅԽՍՏԱԳՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

27 նոյեմբ.

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Պետական կանցլերը ռայխստագում իր ճառի մէջ ասաց.

«Ռայխստագի նստաշրջանը վերջանալուց յետոյ օգոստոսին Բօլգարիան սկսեց պատերազմական գործողութիւններ: Համաձայնութեան պետութիւնները պատերազմի հէնց սկզբից ամէն ջանք գործ դրին, որպէսզի Ֆերդինանդ արքային թեքեն իրանց կողմը. նրանք խոստացան նրան աւստրո-ունգարական, թիւրքական և յունական երկրների մասերից, խոստացան ոչ միայն չէզոք հողեր, այլև չը խնայեցին անգամ դաշնակից Սերբիայի երկիրը. ինչ որ վըտանգից նրա անձեռնմխելիութիւնը պաշտպանելու համար Ռուսաստանը պատերազմ առաջ բերեց և որի ազատագրութեան համար համաձայնութեան պետութիւնները իբր թէ ներկայումս պատերազմում են: Որպէսզի Բօլգարիան կռուէր համաձայնութեան պետութիւնների օգտին, Սերբիային ստիպեցին անել նրան տէրիտօրիալ զիջումներ այնպիսի չափերով, որ նա չէր կարող: Այդպիսով մեր հակառակորդներն չը կարողացան համաձայնել իրար միջև»:

Շօշափելով 1912—1913 թ. թ. բալկանեան պատերազմը, կանցլերը մատնանշեց Բօլգարիայի այն ժամանակ կրած պարտութիւնը, և այժմեան, շնորհիւ աւստրո-գերմանական և թիւրքական զօրքերի աջակցութեան, յաղթանակը և ընդգծեց դէպի Մերձաւոր Արևելք ուղղված ճանապարհի կարևորութիւնը:

Այնուհետև կանցլերը հեգնանքով յիշեց համաձայնութեան պետութիւնների կատարած քայլերը Յունաստանի դէմ և Անգլիայի այն դերի մասին, որ հետամուտ է Գերմանիային կղզիացնել, և Անգլիային վերագրեց ժողովուրդների սպանութիւնը:

Դիմելով պատերազմական դրութեան հարցին, կանցլերը ասաց. «Արևելքում մեր զօրքերը աւստրո-ունգար զօրքերի հետ գրաւում են Ռուսաստանի երկրի բաւականին մասը և ունենք հաստատապէս ամրացված զօրագիծ և ուզած րօպէին պատրաստ են նորից առաջանալու»:

Մատնանշելով ֆրանսիական և իտալական զօրաճակատների դրութիւնը, կանցլերը կանգ առաւ լորերի այն կացութեան վրա, որպիսին տիրում է Բէլգիայում, Լեհաստանում, Լիտվայում և Կուրլիանդիայում և մեծ գովասանքներով խօսեց գերմանացիների կուլտուրական աշխատանքի մասին, ի միջի այլոց Բէլգիայում, յիշելով որ այդ շրջանում նրանք մացրել են ընդհանուր ուսում ֆլամանդական լեզուով: «Լեհաստանում, Լիտվայում և Կուրլիանդիայում,—ասաց նա,—մենք տեսանք ռուսների գործած սոսկալի աւերումների պատկեր: Բոլոր այդ շրջանները բաւիս բուռն նշանակութեամբ աւերված էին: Մենք սանձեցինք նոր ստորկանութիւն, աջակցեցինք սանձելու համայնական վարչութիւն, ձեռնարկեցինք երկաթուղիներ և խճուղիներ կառուցանելու, մուծեցինք քաղաքային ինքնավարութիւն, որ զբաղւում է ազգաբնակութեանը հասարակական գործունէութեան. ամենուրեք վերսկսվեցին դպրոցական զբաղմունքները, Վարշավայում բացվեցին համալսարան և բարձրագոյն տեխնիքական դպրոց: Հագիւ թէ համաշխարհային պատմութեան մէջ որևէ պատերազմի ժամանակ, որի մէջ կռւում են միլիօնաւոր մարդիկ, աւելի է այնքան կուլտուրական խաղաղ աշխատանք թողնւնքում, ինչպէս այժմ: Ինչ վերաբերում է տնտեսական դըրութեան, մենք ունենք բաւականին միջոցներ գոյութեան համար, եթէ այդ միջոցները բաշխվեն կանօնաւոր կերպով: Դրանում է կայանում վճռական հիմնական փաստը: Մեր թշնամիները կենսական մթերքների համար վճարում են աւելի՝ քան մենք»: (Լիբկնեխտը կարգի է հրաւիրվում բացականչութեան համար):

Ցետոյ կանցլերը հերքեց այն լուրերը, թէ իբր Բիւլօվին Շվէյցարիայում, Վօլֆին՝ Հաագում, Բադէնի պրինցին՝ Ստօկհօլմում և կարդինալ Հարտմանին՝ Հռօմում յանձնարարութիւններ են տրված միջնորդ լինել հաշտութիւն կնքելու համար:

Կանցլերը աւարտեց իր ճառը պատերիկ տօնով, յայտնելով որ նա դրութիւնը բնորոշեց փաստերի իսկական կացութիւնը նկատի առած, փաստեր, որոնք ակներև են և անհերքելի: «Գերման ժողովուրդը,—ասաց կանցլերը,—անյողդողդ է, յենվելով հաւատի ու իր ուժի վրա, և անյաղթելի է: Մենք խօսքերով չենք համոզի, այլ վճռապէս կը շարունակենք կռիւը, որ կամենում էին մեր թշնամիները, որպէսզի մինչև իր վախճանին հասցնենք այն, ինչ պահանջում է մեզանից Գերմանիայի ապագան»:

Կանցլերի ճառը առաջ բերեց բուռն ծափահարութիւն, որ խեղդում էր Լիբկնեխտի բողոքի բացագանչութիւնները:

Կանցլերից յետոյ խօսեց Շէյդէմանը, որպէսզի պատճառաբանէ հաշտութեան հարցը: «Հաշտութիւն կնքելու մասին իրաւունք ունի խօսել,—ասաց նա,—միայն նա, որին թոյլ է տալիս նրա ուժը: Մենք վճռապէս հանդէս կը գանք բոլոր նրանց դէմ, որոնք կը կամենան ներկայ կռիւը վերածել նուաճողական պատերազմի. սակայն ընդ ամին ժխտում ենք Գերմանիայի դէմ, նրա անձեռնմխելիութեան դէմ ուղղված ամէն ծրագիրները: Մենք, հարկաւ, լսել անգամ չենք ուզում Էլզասը և Լօթարինգիան Գերմանիայից անջատելու մասին»:

Հետոյ բերեց լորդերի և համայնքների պալատներում հաշտութեան մասին եղած յայտարարութիւնները և շարունակեց. «Այդ ամենը ասվեց պարլամենտում մի երկրի, որ սկսեց պատերազմը սուրբ նրա համար, որպէսզի ամենայանցաւոր կերպով բաւարարէ իր իմպերիալիստական ախորժակները: Բայց անգլիացիների երազանքը՝ ստրկացնելու Գերմանիային՝ անաջողութեան հանդիպեց: Ի հարկէ մեզ մի քանի բաներ պակասում են, բայց մենք ունենք 20 միլիօն խոզ, իսկ գետնախնձորի բերքը այնպէս փայլուն էր, որ մենք նրա $^{3}/_{4}$-ը գործածեցինք իբրև անասունի կեր ու այլ պէտքերի համար»:

Ապա Շէյդէմանը կշտամբեց թշնամի երկրների մամուլին և քաղաքական գործիչներին նրա համար, որ նրանք չեն քարոզում հաշտութեան գաղափարներ, և յայտնեց, թէ իբր աւստրիական և գերմանական սօցիալիստների միջև լիակատար համերաշխութիւն է տիրում՝ ինչպէս հայրենիքը պաշտպանելու կարծր կամքի մէջ, այնպէս և հաշտութիւն ձեռք բերելու մտադրութեան մէջ: «Գերման ժողովուրդը,—ասաց Շէյդէմանը,—չէ կամենում պատերազմը շարունակել այնքան, քան այդ անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար: Երկրի անկախութիւնը ապահովելու համար գերման ժողովուրդը կանգնէ իր ուժի չափ, առաջ քան կը յայտարարէ բացէ ի բաց, թէ ինքը հաշտութիւն է կամենում, որովհետև մենք այնքան ուժեղ ենք, որ կարող ենք շարունակել պատերազմը մեր օջախների պաշտպանութեան համար, եթէ թշնամիները չը կամենան հաշտութիւն կընքել: Մենք չենք կամենում, որպէսզի պատերազմը աւարտելու համար առաջին վճռական քայլը բղխէ Գերմանիայից»:

Կանցլերը, պատասխանելով Շէյդէմանին, ասաց. «Հաշտութեան ցանկութիւններով ու թէօրիաներ պարզաբանելով մենք առաջ չենք գնայ: Եթէ մեր թշնամիներն առաջարկեն հաշտութեան այնպիսի պայմաններ, որոնք համապատասխանէին Գերմանիայի արժանապատւութեանը ու անձեռնմխելիութեան սկզբունքին, մենք ամէն ժամանակ պատրաստ կը լինենք ձեռնարկել այդ պայմանների քննութեան: Նախկին ճառի մէջ ես որոշեցի պատերազմի ընդհանուր նպատակը, բայց այսօր ես հնարաւորութիւն չունեմ մասրամասնութիւնների մասին մտնել և չեմ կարող ասել, թէ ինչպիսի երաշխիքներ կը պահանջէ կառավարութիւնը, օրինակ, Բէլգիայի հարցում, թէ ինչ կը պահանջէ նա գնել այդ երաշխիքների [illegible] մունքում: Ցամենայն դէպս մեր թշնամիները պէտք է հասկանան, որ որքան հեռու ու աւելի կատաղի վարեն նրանք պատերազմը, այնքան կընդարձակվեն այն երաշխաւորութիւնները, որ մենք կը պահանջենք: Ինչպէս Արևելքում, այնպէս և Արևմուտքում մեր հակառակորդները այսուհետև Գերմանիա ներս խուժելու համար չեն տիրապետելու այն դռներին, որոնց միջով նրանք կարող էին պատերազմից յետոյ սպառնալ աւելի քան առաջ: Ամէնքին յայտնի է, որ Ֆրանսիան գնեց ռուսական փոխառութիւնները միայն այն պայմանով, որպէսզի ռուսները կառուցանեն բազմաթիւ երկաթուղիներ Լեհաստանում մեր դէմ կռվելու համար, և որ Անգլիան և Ֆրանսիան Բէլգիան համարում էին իրանց արշաւանքի երկիր: Դրա դէմ է, որ մենք պէտք է ապահովենք մեզ քաղաքական ու ռազմական տեսակէտից: Մենք պէտք է ապահովենք նմանապէս մեր տնտեսական զարգացման [illegible] պէտք է մեզ վերապահենք այդ նպատակին հասնելու միջոցների ընտրութեան լիակատար ազատութիւնը: Գերմանական կառավարութեան համար այս պատերազմը մնում է այնպէս, ինչպէս և առաջ, այսինքն պաշտպանողական պատերազմ յանուն գերման ժողովրդի և նրա ապագայի»:

Կանցլերի ճառի առիթով «Բերլինէր-Տագեբլատը» գրում է. «Շատերը չկարծում են, թէ պէտք է նուաճել կէս Եւրոպան և աւելին, որպէս զի Գերմանիայի սահմանները ապահոված լինեն, բայց աչքաթող են անում այն, որ դրանով պատերազմը կերկարէ, բայց վերջ ի վերջոյ հարկ կը լինի նուաճել այդ նոր սահմանները ևս»:

«Դեօյչէ-Տագես-Ցայտունգը» ասում է՝ «Մեր թշնամիները գիտեն այժմ, թէ ինչ է Գերմանիան: Ամբողջ գերման ժողովուրդը կամենում է ոչ միայն դիմադրել, այլ և յաղթել»:

«Ֆօրվէրտսը» նկարագրում է այն միջադէպը, որ տեղի է ունեցել նիստի վերջում ռայխստագում: Համաձայն ռայխստագում սահմանված սովորութեան՝ վերջին խօսողը լինելու էր սօցիալ-դեմօկրատների ներկայացուցիչը: Լանդսբէրգը հրաժարվեց խօսել կանցլերից յետոյ, բայց Շպանի բացատրութիւնից յետոյ բուրժուական կուսակցութիւնները ձայնտուին վճռաբանութիւնները դադարեցնելու օգտին, որ առաջ բերեց աղմկալի տեսարաններ: Սօցիալ-դեմօկրատները բողոքեցին: Սօցիալ-դեմօկրատ Հաազէն արտասանեց խիստ ճառ, որի մէջ ի միջի այլոց «Կանցլերի բազմաթիւ յայտարարութիւններից յետոյ անհրաժեշտ է, որպէսզի միայն ժողովուրդը և միացած աշխարհը իմանան, թէ բնաւ ոչ-ամբողջ ռայխստագը համակարծիք էր այդ յայտարարութիւններին: Մենք պահանջում ենք հրաժարվել ամէն տեսակ նուաճողական ծրագիրներից, մենք կամենում ենք հաշտութիւն»: Ցետոյ վճռվեց սկսել վիճաբանութիւններ հարցապնդման առիթով: Լանդսբէրգը խօսեց վերջինը:

Տեղիս բոլոր լրագիրները համակարծիք են այն հարցում, որ կանցլերի, Տաաֆէի, Տիսսայի ճառերը լիովին հիասթափեցրին հաշտութեան բարեկամներին: Ցամենայն դէպս շուտով հաշտութիւն կնքելու մասին խօսք լինել չէ կարող:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

27—29 նոյեմբերի

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ.—Նօբէլեան կոմիտէն որոշեց չը բաժանել 1914 թւի մրցանակները և յետաձգեց 1915 թւի մրցանակների բաշխումը մինչև եկող տարի:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Երկրագործութեան մինիստրութեան կառավարիչը միջնորդում է մինիստրների խորհրդի առաջ՝ յատկացնել 5 միլիօն ռուբլի ձեռք բերելու համար բարեկամ չէզոք երկիրներում գիւղատնտեսական գործիքներ:

ՄՕՍԿՎԱ.—Այս օրերս վախճանված Մէնաբիրը կտակել է 100,000 ռուբլի Մօսկվայի համալսարանական բժշկական և իրաւաբանական ֆակուլտէտներում թոշակաւորների տեղեր հաստատելու համար:

ՌԻՉՄՕՆԴ (Վիրգինիա).—Հրդեհը ոչնչացրեց Գօպուէլ քաղաքը, ուր կառուցված են Դիւպօնի նոր վառօդի գործարանները, որոնք սակայն չը վնասվեցին: Նրանց մօտ կալանաւորվեցին 2 հոգի պայթուցիկ նիւթերով: Կարծում են, որ կալանաւորվածները գերմանահպատակներ են: Հրդեհի պատճառած վնասը 1 միլիօն դօլլարից անցնում է: Հազարաւոր մարդիկ մնացել են անապաստան: Ցայտարարվեց զինւորական դրութիւն: Ամբոխը Լինչի դատաստանին ենթարկեց [illegible] նեգրի՝ կողոպուտի համար: Ցամառ կերպով խօսվում է, որ հրդեհը չարամտութեան գործ է:

ՆԻՒ-ԵՕՐԿ.—Երիում (Պէնսիլվանիա) [illegible] միլիօն բուշելի հացահատիկ, որ ուղարկվելու էր իր հերթին, կրակը լափեց. վնասը 750,000 դօլլար է. պատճառը յայտնի չէ:

ՍԱՐԱՏՕՎ. Արուարձանում գազանաբար սպանվել է կողոպտման նպատակով Շվէյխէրի 5 հոգուց բաղկացած ընտանիքը: Ոճիրը թաքցնելու համար կողոպտիչները հրդեհել են տունը սպանվածների հետ:

ՊԱՐԻԶ.—Հաւասի գործակալութիւնը տըպել է հետեւեալ հեռագիրը Հաւրից. «Անյայտ պատճառից առաջացած ուժեղ պայթումից փլվեցին այսօր առաւօտեան քաղաքից 3 կիլոմետր հեռաւորութեան վրա գտնվող բէլգիական հրանիւթային արհեստանոցները: Պայթումի ժամանակ բոլոր բանւորները գտնվում էին աշխատանքի վրա: Պայթումի ուժը այն աստիճան մեծ էր, որ հարեւան տների դռները և պատուհանները ջարդվեցին կամ պոկվեցին: Նիւթական վընասները շատ մեծ են: Տակաւին պարզված չէ զոհերի թիւը»:

ՏՕԿԻՕ.—Հրաման արձակվեց բարձրացնելու ժողովրդական կրթութեան մակարդակը:

ՊԱՐԻԶ.—Հաւրի հրանիւթային արհեստանոցներում պայթումի ժամանակ աշխատում էին 1500 բանւոր. վիրաւորների թիւը մեծ է: Պայթումի պատճառը դեռ պարզված չէ:

ՊԵԿԻՆ.—Պետական խորհուրդը հանրապետութեան նախագահ Իւանշիկային ներկայացրեց ընտրողների ձայնատւութեան հետեւանքը, որոնց մեծ մասը անհրաժեշտ է ընդունում փոխել հանրապետական կազմը և Իւանշիկային ընտրել կայսր: Վերջինս պատասխանեց, որ ինքը չի կարող դրժել իր երդումը, երբև հանրապետութեան նախագահ: Դրանից յետոյ պետական խորհուրդը երկրորդ անգամ դիմեց Իւանշիկային՝ իբրև կայսրի, ազատելով նրան երդումից և հըռչակելով կայսր:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Կոպէնհագէնի լրագիրները հաղորդում են, որ գերմանացիք կարող են հաշտութիւն կնքել հետեւեալ պայմաններով. Գերմանիան պահանջում է տիրապետել Բալկանների վրա, կազմել Գերմանիայի և Ռուսաստանի միջև բուֆեր-պետութիւններ, Բելգիային վերադարձնում է իր անկախութիւնը, իսկ Ֆրանսիային՝ Էլզասի մի մասը:

◆ Աթէնքից հեռագրում են, որ դաշնակիցները նահանջում են յունական սահմանից: Սալոնիկը դատարկվում է:

◆ Գերմանական ներքին գործերի մինիստրը հրահանգ է հրատարակել, յորդորելով կռիւ մղել երիտասարդների լկտութեան դէմ, որ կրկնապատկվել է պատերազմի սկզբից:

◆ «Р. Инвалидъ»-ը գրում է. «Նկատվում է, որ վերջին օրերի դէպքերը որոշ չափով պարզեցին մեր թշնամիների մտադրութիւնը կովկասեան ռազմաբեմի վրա, գլխաւորապէս Պարսկաստանում, անգլիացիների գործողութիւնների հետ յարակից: Մեր թշնամիների նպատակն է խմորում առաջ բերել Պարսկաստանում և այդպիսով ստիպել կովկասեան մեր զօրքին ցրել իր ուժերը աւելի լայն զօրաճակատի վրա, որը, շնորհիւ դրա, երկու անգամ մեծացել է»:

◆ Միջագետքում գերման-թիւրք զօրքերի հրամանատար է կարգվել ֆօն-դեր Գոլց-փաշան:

◆ Բեռլինի լրագիրները հաղորդում են, որ Յունաստանը իր զօրքերին դուրս է հանել Դրամայի շրջանից: Կավալան փակ է մասնաւոր հաղորդակցութեան համար:

◆ Հաղորդում են, որ Բեռլինում կայսերական պալատի առաջ ցոյց է եղել յօգուտ հաշտութեան: Գերման զօրքը այժմ հաւատացած է, որ վերջնական յաղթութիւնը անմատչելի է գերմանացիների համար:

◆ Գերմանական բոլոր քաղաքներում համարեա դադարել է էլեկտրական էներգիան:

◆ «Р. В.»-ն հաղորդում է. «Բուլգարական լրագիրները ճչում են, որ Յունաստանի և Թիւրքիայի միջև պայմանագիր է կապված, վերաբերեալ տնտեսական հարցերին և Թիւրքիայում ու Յունաստանում բընակվող իրանց հպատակների իրաւունքների պաշտպանութեան»:

◆ Հեռագրում են, որ Շանխայում անկարգութիւնները ճնշված են և 300 ապստամբներ գնդակահարվել են:

◆ Իտալիան մի չէզոք երկրի միջոցով նախազգուշացրել է Գերմանիային, որ պատերազմ կը յայտարարէ նրան, եթէ աւստրո-գերմանական և բուլգարական զօրքերը հալածեն սերբերին ալբանական երկրի վրա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք 1) Նոր-Գադրէից, Ցովակիմ Ք. Ջատիկեանի միջոցով հանգանակված 82 ր. 90 կ., 2) Կիսլովոդսկից, Գէորգ Բօրօզդինեանից 25 րուբլի:

ՍԵԴՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆ

Հայկական մանկավարժութեան և գրականութեան մի այլ մոհիկան, աւելի ճիշդ է ասել՝ հայկական մանկավարժութեան հայրը՝ Սեդրակ Մանդինեանն էլ անցաւ յաւիտենականութեան ծոցը:

Նա մեռաւ նոյեմբերի 28-ի գիշերը՝ 72 տարեկան հասակում:

Մեռաւ ամբողջ 20 տարի տանջվելով, տառապելով մի անագորոյն, դժնդակ հիւանդութիւնից:

Եւ իսկապէս նա հանգիստ գտաւ իր ցաւերից:

Սեդրակ Մանդինեանը, ինչպէս յայտնի է, իր ուսումն ստացաւ և պատրաստվեց յատկապէս մանկավարժական ասպարէզի համար իբրև Սանասարեանի որդեգիր: Աւարտելով Գերմանիայում՝ գերմանացի հռչակաւոր մանկավարժների ղեկավարութեամբ՝ իր մասնագիտական կրթութիւնը, նա եկաւ ծառայելու իր հայրենիքին և իր ժողովրդին: Եւ առաջին գործն եղաւ այն, որ ճանապարհորդեց Հայաստան, այցելեց Վասպուրականը (կարծեմ անցեալ դարի 70-ական թւականներին) և վերադառնալով Վանից Թիֆլիս՝ կարդաց դասախօսութիւն Հայաստանի դրութեան մասին: Ապա նա նուիրվեց մանկավարժական գործունէութեան, կազմեց և հրատարակեց իր առաջին դասագիրքը՝ «Նախապետական Աշխարհ» անունով՝ և շուտով կոչվեց Ներսիսեան դպրոցի տեսչութեան պաշտօնին, որ, սակայն, երկար չը վարեց և 80-ական թւականների սկզբին ստանձնեց Շուշու թեմ. դպրոցի տեսչի պաշտօնը. ապա հանգուցեալ Գէորգ IV կաթողիկոսի օրով հրաւիրվեց Էջմիածին՝ ճեմարանում որպէս մանկավարժութեան ուսուցիչ և այդ պաշտօնը նա վարեց մի քանի տարի: Իր պաշտօնավարութեան ընթացքում նա հետզհետէ լոյս էր ընծայում մանկավարժական գրքեր, դասագրքեր և մասնակցում էր նաև հայ մամուլի աշխատակցութեան:

Էջմիածնի ճեմարանը թողնելուց յետոյ, նա եկաւ Թիֆլիս բժշկվելու այն հիւանդութիւնից, որ սկսել էր ծայր տալ (էկզեմա) և որ միանգամայն թշուառացրեց նրան, ստիպելով երկար և ձիգ տարիներ ծառայել անկողնին և տնից դուրս չը գալ: Բայց և հիւանդութեան տառապանքի մէջ նրա հետախոյզ, միշտ թարմ և յաւիտենական ճշմարտութիւնը որոնող միտքը անդադար գործում էին, և նա արձագանք էր տալիս ամեն մի երևոյթի, դէպքի, որ յուզում, խռովում էր նրա հոգին: Գուցէ, եթէ նա ունենար նիւթական միջոցներ, կարողանար ազատվել իր սոսկալի հիւանդութիւնից, որ այլանդակեց նրա դէմքը, բայց ոչ հոգին. բայց նա նոյնիսկ հասարակ ապրուստի համար միջոց չունէր և ծանրաբեռնված լինելով բազմանդամ ընտանիքով՝ ապրում էր այն չնչին թոշակով, որ տալիս էր նրան Ներսիսեան դպրոցը, և նպաստներով, որ երբեմն ստանում էր Հ. Բ. Ընկ. Աբովեան Նազարեան գրական ֆոնդից:

Եւ հայկական մանկավարժութեան հայրը, որի մեթոդով, ուղղութեամբ կրթվել են մի քանի սերունդներ, իջաւ գերեզման, գրեթէ ամենքից լքված, մոռացված և այն ճնշող հանգամանքով, թէ հայ ազգը չը գիտէ վարձատրել, գնահատել իր անխոնջ մշակներին, այլ գիտէ միայն փառաւոր թաղումներով յաւերժացնել նրանց դէպի յաւիտենականութիւն:

Մենք կարծում ենք, որ Սեդրակ Մանդինեանի թաղումը պէտք է կատարվի հասարակական հաշւով, գոնէ մի վերջին յարգանք մատուցանելու այն անձին, որ այնքան շատ աշխատեց և գործեց հայկական մատաղ սերունդի դաստիարակութեան և կրթութեան համար: Ապա այդ պարտքը ամենից շատ ծանրանում է Ներսիսեան դպրոցի և Էջմիածնի ճեմարանի վրա, որոնց ղեկավարն հանդիսացաւ նա մի քանի տարիներ:

Գալով այն վէճին և հալածանքին, որ յարուցեց Ս. Մանդինեանի դէմ մի այլ հայ մանկավարժ, հանգուցեալ Ղ. Աղայեանը, մենք կարծում ենք, որ այդ վէճը վերաբերելով սկզբունքներին և մեթոդներին, ապագայ անաչառ քննադատութիւնը կարող է մաքրելով զուտ անձնականը և կրքայինը՝ իր անաչառ դատաւճիռը տալ, թէ նրանցից իրաւունք ունէր Ս. Մանդինեա՞նը թէ Ղ. Աղայեանը:

Իսկ մենք հանգիստ կը մաղթենք տառապեալ Ս. Մանդինեանի ոսկորներին:

Հ. Ա.

ՀԱՅ ՆՊԱՍՏ. ԸՆԿ. ԼԻԱԶՕՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Հայ Նպաստամատոյց Ընկերութեան լիազօր Դր. Վարդանեանը Մուսունից հետեւեալ զեկուցագիրն է ուղարկել Ընկերութեանը, թւագրված նոյեմբերի 19-ից:

* *

Արդէն մեր երկիրը ձիւնապատ է. սկսել են բուքն ու բորանը. ամեն ոք իր խրճիթում է ապաստան ստանում. մարդկային բոլոր ջանքերը գործ են դրվում ձմեռվայ անհրաժեշտ պէտքերը հոգալու, լրացնելու. միայն մեր գաղթականութիւնն է, որ յոյսը դրած մեզ, իսկ մեզնով էլ ազգի ղեկավարողների վրա՝ սպասում է անդէտ տաք շորերի, վերմակների, կօշիկի, գուլպայի, սապօնի, թէյի, շաքարի, նաւթի... ու սպասում է: Դիմել եմ անձամբ Խորէն սրբազանին, Կաթողիկոսին, Եղբ. Օգն. Գլխաւոր Կարգ. Ցանձնաժողովին ու դիւանապետ Տիրայր վարդապետին, գրաւոր թէ բանաւոր խնդրել, աղաչել յանուն տեղիս գաղթական թէ տեղացի 5000-ից աւելի ապաբաղդ ապգաղթականութեան և օգնութիւն, շուտափոյթ օգնութիւն ազդարել, սակայն... ձայն բարբառոյ յանապատի. մինչև այսօր էլ ոչինչ չեմ ստացել և յոյսս էլ չափազանց քիչ են. չը գիտեմ ինչ միջոցի դիմեմ, ձեռ դուռը բաղխեմ. միայն այսքանը կասեմ, որ երէկ և այսօր բոլոր գիւղերից աղեկտուր խնդիրներ եմ ստացել, ուր ամեն ինչ կորցրած հայ գաղթականը խրատում բողոքում է, որ իրանք կենտրոններից հեռու ընկած լինելով՝ անուշադրութեան են մատնվել. չը գիտեմ այլ ևս ինչով բաւարարեմ. խօսքեր՝ հօ մինչև այսօր տուել ենք, բայց թշնամին՝ ձմեռը՝ դռան առջև կանգնել է. խօսքերն այլ ևս գրօշի արժէք չունեն, պէտք է հոգալ վերջապէս գէթ ամենաանհրաժեշտ պէտքերը. բաւական օրեր առաջ հեռագրել եմ նաև Քաղ. Միութեան լիազօր պ. Ալ. Խատիսեանին և Նպաստամատոյցին, և այս տեղերից և ոչ մէկից էլ ոչ մի պատասխան չը կայ: Այսօր իմ օգնական ինտելիգենտ շրջանային գործիչ ընկերներիս ժողովի էի հրաւիրել, ժողովում կարդացվեցին մի շարք բողոք-խնդիրներ, որոնք բոլորն էլ շօշափում էին գրեթէ վերոյիշեալ պէտքերը. և այդ շատ բնական է, որովհետև սեպտեմբերից մինչև այժմ մարդկանց կերակրել ենք այն յոյսով, թէ ազգը կամ ազգային ղեկավար մարմիններն ու ընկերութիւնները իրանց ևս չեն մոռացած և շուտով օգնութեան կը հասնեն. անշուշտ, այս բողոքները սկիզբն են երկանց. . . . . . .

. . . . քանի որ մեր խոստումների չիրականացած դէպքում՝ նրանցից ամեն մէկին սպառնում է ցուրտը և սովը: Այսպիսի հանգամանքներում անշուշտ առաջին զոհերը մենք կը լինենք, բայց այսու հրապարակով յայտնում եմ, որ ամեն միջոց և ամեն տեղ դիմումն եղել է իր ժամանակին մեր կողմից և հետեւաբար անխուսափելի ցնցող ապագայ դէպքերի ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է այն անձանց և մարմինների վրա, որոնք գաղթականութեան խնամքի գործն իրանց վրա վերցնելով՝ այսօր, այսպիսի կրիտիկական րօպէում, մեր բոլոր դիմումներն և աղերսանքները բարձի-թողի են անում: Ես իմ ընկերներիս ու ամբողջ գաղթականութեան կողմից՝ ահա ամսից աւելի է, ինչ դիմում, խնդրում եմ՝ օր առաջ հեռագրել ձեռք կարկառել, բայց... բայց ուր է մնացել այն բարերար ձեռքը, որ հասնի այս սարերի լանջերը:

Օ՜, անտանելի է, պարոնայք և տիկիններ, այս կացութիւնը. զգում ես տառապանքի ամբողջ էութիւնը, տեսնում ես մեծ դուլորի զոհերի մաշված ու հիւծված դէմքերը, աչքիդ առջևն է գեղատեսիլ աշխարհը, մօտենում ու տեսնում ես նաև որբը՝ ձեան շերտի վրա սառած տկլոր. ա՜հ, անտանելի է, կրկնում եմ, այս կացութեան ականատես լինելը՝ առանց գործնական օգնութեան. մարդ քարից շինած պիտի լինի, որ կարողանայ դիմանալ: Կոչ արէք, խնդրում եմ, պաղատում, ամենքին, ամենքին՝ շուտափոյթ օգնութեան հասնելու, ամեն րօպէ ուշանալը մի կեանքի վերացման կը նպաստի...

Եթէ 5—10 օր էլ այս կացութեանը մի վերջ չը դրվի, ստիպված ենք գործի ղեկավարներս մեր փասափուսէն այստեղից հաւաքել և վերադառնալ մեր տները. այսպէս է հրամայում կեանքն ինքը:

Ցորենի գնման խնդիրն էլ դեռ չի կանոնաւորված. իմ ձեռքի տակ եղած ցորենը հազիւ մինչև դեկտ. 15-ը բաւականանայ. եթէ մինչ այդ փողային հարցը Էջմիածնում կամ մի այլուր մի գրական վճիռ չը ստանայ ու մենք ցորեն չը փոխադրենք, հաւատացէք՝ սով է: Ես խնդրել եմ Եղբ. Օգն. Գլխ. Կարգ. Ցանձնաժողովից գէթ 2 վագօն ալիւր հասցնել, որ, ի դէպ, եթէ ցորենն ուշանայ, մի քանի օրվայ համար ալիւր բաժանենք, բայց ինչ կասեմ, առողին էլ լաւ պիտի լինի:

Տեղական մի հայ թերթում պատահմամբ կարդացի, որ Էջմիածնի Եղբ. Օգն. Գլխ. Կարգ. Ցանձ.-ը իբր թէ 30,000 ր. դրել է Ալաշկերտի Հայ Գիւղ. և Տնայն. Ընկ. տրամադրութեան տակ՝ այս կողմերի համար սերմացու գնելու: Այս լուրը թւում է ինձ խեղաթիւրված. և ահա թէ ինչու. 1) այս րօպէիս հարցը ոչ թէ սերմացուի մասին է, այլ անմիջական ուտելու և ապրելու հացի մասին. եթէ Եղբ. Օգն.-ը վճռել ու յատկացրել է, ճիշդ որ, այդ գումարը, ապա ուրեմն դրանով ցորեն է գնվելու և հաց տալու գաղթական թէ տեղացի կարօտեալներին. 2) որ Հայ Գիւղ. և Տնայն. Ընկերութեանը տրված է ասելը նոյնպէս սխալ է, քանի որ Ալաշկերտի շրջանային կոմիտետն է, որ այդ գործը վարել է և վարում է և որի մէջ մտնում են Եղբ. Օգն., Նպաստ. Ընկ. և Հայ Գիւղ. և Տնայն. Ընկ. ներկայացուցիչները: Պարզ իրողութիւնն այս է:

Ամսիս 17-ին Դիադինի շրջանի կառավարիչ բարօն Հօյէնը ինձ և բժ. Ալ. Աթաբէկեանին հրաւիրել էր իր մօտ՝ Դիադին: Բարօն Հօյէնը յայտնեց մեզ, որ Փոխարքայի օգնական Պետերսօնից հեռագրով ստացել է 12,000 ր. հայ և եզիդի գաղթականներին ամսական նպաստ տալու համար, օրական 15 կ. կամ ամսական 4 ր. 50 կ.:

Չը կամենալով միայնակ տանել այդ գործը, առաջարկեց և կազմվեց Դիադինի շրջանի կոմիտէտը, որի նախագահն ինքը բարօն Հօյէնն է լինելու, իսկ անդամները՝ ես ու բժիշկը: Այս յանձնաժողովը իր առաջին նիստում հենց որոշեց անմիջապէս ձեռնարկել ցորենի գնման և 10,000 ր. յատկացրեց այդ նպատակի համար, իսկ 2000 ր. թողնվեց նախագահի տրամադրութեան տակ այլ և այլ պէտքերի համար: Յանձնաժողովի անունից նախագահը նոյնպէս հեռագրով Թիֆլիս Պետերսօնին յայտնեց այս բոլորի մասին, և խնդրեց դեկտեմբեր և յունվար ամիսների նպաստը միանուագ ու շուտ հասցնել իրան, որովհետև, քանի դեռ ճանապարհները բաց են, ցորենը փոխադրվի Դիադին ու Մուսուն: Ցորենը ամբարվելու է Դիադինում ու Մուսունում. ցորենի գնման համար Կարաքիլիսէ մեկնեց բժ. Աթաբէկեանը, իսկ բաժանման գործը կը յանձնվի ինձ և իմ ընկերներին, որպէս Եղբ. Օգն. ներկայացուցչի: Պետական այս օգնութիւնը, սակայն, չի բաւարարի, գոնէ հայ գաղթականութեանը, և մենք ստիպված ենք լինելու լրացնել:

Այստեղ՝ Մուսունի և Արծափի շրջանում բժշկական օգնութիւնը դեռ ևս կանոնաւորված չէ, հիւանդների և հիւծվածների թիւը շատ շատ է, սակայն բժիշկ չը կայ փաստօրէն. Մոսկվայի խմբի ղեկավար բժ. Աթաբէկեանը շարունակ այլ գործերով ճանապարհորդում է, իսկ բժշկական կարեւոր և էական գործը մնացել է մի ռուս կուրսիստուհու ձեռք, որն անշուշտ չի կարող բժշկի դեր կատարել, 15 հոգուց բաղկացած խմբի մէջ, գոնէ Մուսունի շրջանում չը կայ մի ֆելդշեր:

Այս երկու օրս հիւանդանոցի մի մասը բացվել է, ուր տեղաւորվել են 3—4 հիւանդ. կրկնում եմ, բժիշկ չը կայ. և եթէ բժ. Աթաբէկեանն էլ միշտ իր տեղումը մնայ, այնուամենայնիւ մի բժիշկ էլ և կամ երկու փորձված ֆելդշերներ ու ֆելդշերուհիներ անհրաժեշտ են:

Այս ամսվայ ընթացքում Ալաշավայի կողմերից մօտ 60 կանայք, աղջիկներ և երեխայք եկան տեղս, որոնց տեղաւորեցի Կորուն գիւղում, այդ բոլորը քիւրդերից բռնված և գերված էին. . . . .

. . . . քիւրդերը թողած փախած են ու այս խեղճերն էլ մերկ ու քաղցած, գլուխներն առել փախել են այս կողմերը: Ոչինչ չունեն. պէտք է հասկանալ այս ոչինչը:

Երէկ տեղս հասան Մուշի ս. Կարապետի անտառները 5—6 ամսից ի վեր ապաստանող կուռող ու վերջին օրերս մի կերպ իրանց գլուխն ազատող մօտ 27 անձինք, որոնց մէջ է նաև ս. Կարապետի վանքի դպրոցի տեսուչ պ. Մկրտիչը, մի կրթված անձն. նոյնպէս երկու ուսուցիչ նոյն դըպրոցից՝ Ցակոբ ու Սրապիօն անունով: Դրանց մէջն են նաև Սարգիս և Ցովհաննէս կարիճ ու անձնուրաց խմբապետները. այս բոլորի հագին մնացել էին քրձեր միայն. վարժապետներ և տեսուչ՝ որոնց շորերի տակից ցրտից կապտած մարմին էր երևում:

Իմ հարցին, թէ ինչպէս անցաք այս կողմը, պատասխանեցին, թէ սարերը ձիւնով պատած լինելով, քիւրդերը իջնում են դաշտերը, որով սարերի թէև դժուարանցանելի, բայց այսպէս թէ այնպէս ճամբան ազատ է:

Այստեղ ամեն ինչ մռայլ է, գոնէ թերթ հասցրէք՝ կարդանք:

Ահա անհրաժեշտ կարիքները այս շրջանում. ալիւր, շաքար, թէյ, աղ, բրինձ, նաւթ, սապօն, լուցկի, տրեխ (տղամարդկանց), չուստ (կանանց), տաք գուլպաներ ու առհասարակ տաք հագուստեղէն և վերմակներ:

Կազմել ենք լրիւ վիճակագրական տախտակ հայ և եզիդի գաղթական գիւղերի, որը կաշխատեմ արտագրել և մի օրինակ ձեզ ուղարկել:

Պիտի յայտնեմ, որ անհրաժեշտ կարիքն ունեմ մի ռուսերէն գիտցող օգնականի, որը մնալու է Դիադինում և հսկելու է Դիադին-Իւչքիլիսէ շրջանի տեղացի ու գաղթական ազգաբնակութեան կարիքներին: Վերջին անգամ ևս բարօն Հօյէնն շեշտեց անհրաժեշտութիւնը այդպիսի անձի:

Առայժմ Դիադինում մնում էր Թումանեանը, ապա Ս. Տիրատուրեանը, որոնք հիւանդանալով մեկնել են. այժմ ոչ ինձ մօտ և ոչ էլ Կարաքիլիսէ ազատ մարդ չը կայ, որ ուղարկենք:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Քաղ. Միութեան Կովկասեան ճիւղի լիազօրը Ջուլֆայից, բժ. Հախվերդեանից ստացել է հետեւեալ հեռագիրը. «Այսօր, նոյեմբերի 27-ին, փախստականներին օգնող ժողովում, հիպատոս Ակիմօվիչի մօտ որոշվեց. սննդական օգնութիւն ցոյց տալ դրամով, և ոչ թէ նիւթով, բանալ կենտրոնական հիւանդանոց Դիլմանում 50 մահճակալով, մի հիւանդանոց էլ Հաֆթվանում 25 մահճակալով և ամբուլատորիա շրջակայ գիւղերում: Փոխարքայի դիւանատան ուղարկած 50,000 ր. հիւպատոսի միջոցով բաժանվում է փախստականների միջև մինչև դեկտեմբերի 5-ը: Ցետագայ սըննդական օգնութեան համար ամեն ամիս հարկաւոր է 100,000 րուբլի. այս գումարը ասորիների Բաշկալէից գալով համապատասխանօրէն կը փոխվի: Տաք զգեստի և անկողնեղէնի սուր կարիքը բաւարարելու համար միանուագ հարկաւոր է 85,000 ր.: Այս գումարը նոյնպէս կը փոխվի փախստականների Բաշկալէ գալու պատճառով: Դիլմանում և Հաֆթվանում հիւանդանոցներ և մի քանի գիւղերում ամբուլատորիաներ հաստատելու համար հարկաւոր է 15,000 ր. առաջին ամիսները: Հետեւեալ ամիսների նախահաշիւը կը ներկայացնեմ իր ժամանակին: Բժշկա-սննդական կայաններ են բացված Կարդաշի կիրճում, Զունիզ-չայում և Սէյդաւերում: Մնացեալ ամեն ինչ բարեյաջող է»:

—

Երևանից գրում են, որ այստեղ էր եկել մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ կամերհէր Վ. Վ. Նիկիտին Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլաեվնայի անուան կոմիտէտի գործերով: Մասնակցելով Կովկասեան Գլխաւոր Կոմիտէտի Երևանի ճիւղի նիստին, կամերհէր Նիկիտինը փոխ-նահանգապետ Ա. Ն. Սարելիցկիի հետ մեկնեց Էջմիածին, ուր ներկայացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Էջմիածնում փախստականների դրութեան և նրանց ցոյց տըրվող խնամքի հետ ծանօթանալով, կամերհէր Նիկիտին մեկնեց Պետրօգրադ:

—

Թաւրիզ, 21 նոյեմբ.

Որպէս խրախոյս և օրինակ տարրերին՝ ներկայիս պատիւ ունիմ յայտնելու, որ մեր բանկի փոխ-կառավարիչ պ. Ֆօխտը, որպէս մի մաքուր, ազնիւ և հայասէր անձնաւորութիւն, միջնորդելով մեր բարձր վարչութեան առաջ՝ Պետրօգրադում, թոյլտւութիւն ստացաւ ի նպաստ մեր փախստականների, որոնք ներկայումս գտնվում են Սալմաստում՝ տալու 3,000 ղրան, մօտ 850 ր., որպիսի գումարը պ. Ֆօխտը փոխադրեց Սալմաստ՝ Թեմիս առաջնորդ Մելիք-Թանգեանին ի գործադրութիւն փախստականների անհրաժեշտ կարիքների:

Մելքոն Շահբազեան

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ
ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

—

Հարկադրված ենք հրապարակով ազդարարելու, որ մեր ապաստարանը բացված օրից մինչև այժմ մենք ոչ ոքի ոչ գրութեամբ, ոչ խօսքով և ոչ էլ մի այլ ձևով դիմում չենք արել խնդրելով նպաստ, օժանդակութիւն: Մենք տպագրել ենք տեղական հայ երկու օրագիրներում յայտարարութիւն, յայտնելով որ նուիրաբերում ենք 4500 ր. պատկերներ Վասպուրականի Վեհափառ Արծւի և Երկաթէ Վեհափառ Պատրիարքի, աւելացնելով որ «Ապաստարանը կը մնայ բաց այնքան շաբաթ, որքան հայ գիտակցութիւնն ու պարտաճանաչութիւնը կարող կը լինեն պահպանել սրա գոյութիւնը»:

Եւ հայ գիտակցութիւնն ու պարտաճանաչութիւնը ոչ թէ շաբաթներով, այլ ամիսներով իսկ հնարաւորութիւն են տուել մեզ բարգաւաճ պահելու «Հրատապ Սփոփանքը», հնարաւորութիւն են տուել կառուցանելու յատուկ ձմեռային աղխատշէն շինութիւն, հայրենիքից տարագիր ընկած մեր յօշոտված ազգակիցների համար, և որը վայելում է ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր հովանին:

Սակայն նոյեմբերի 26-ի երեկոյեան մի գրութեամբ մեզ յայտնում են, որ մեր դիմումը քաղաքագլուխ պ. Խատիսեանին յարգված է, և կարգադրենք ստանալու 216 կտոր տաք հագուստ, ապաստարանիս փախստականների համար, որ պատրաստված է պ. Լ. Մանթաշեանի նուիրաբերված գումարով: Այդ տեղեկութիւնը մեզ շատ թէ զարմացրեց և թէ վշտացրեց: Այսու հրապարակով յայտնում ենք, որ մենք ոչ ոքի, առանց բացառութեան, դիմում չենք արել, և այն նուէրները, որ մենք մինչև օրս ստացել ենք, սրտաբուխ են՝ հայ գիտակցութեան ու պարտաճանաչութեան սուրբ փաստ:

Ընդհակառակը՝ մեզ եղել են մի շարք դիմումներ, թէ պատրաստ են երեկոյթներ սարքել, օպերային ներկայացում դնել մեր ապաստարանի օգտին և խնդրել են մեր բարոյական խորհուրդն ու աջակցութիւնը, սակայն մենք բացէ ի բաց հրաժարվել ենք.

Տ. Նազարեան

Ստացված են նուէրներ՝ տ. Վարվառէ Եւանգուլեանից մի գառ:

Դրամով՝

Սարգիս Գ. Ցարութիւնեանի միջոցով Արմենակ Ցովհաննիսեանցի պսակադրութեան խնճոյքին հաւաքված 30 ր., Բօրի Աւագեանից 10 ր., Ալէքսանդր Աբէլեանից 6 ր. (Բ. Իշխանեանի «Աղէտի և տառապանքի աշխարհից» գրքերից գոյացած) և 25 ր. Նոր-Նախիջեանի վաճառականական ակումբից, Մոսկվայից՝ Ցարութիւն Հախնազարեանից 5 ր., տ. Լուսաբեր Աւետիսեանից 5 ր. և բժշ. Ալէքսանդրոս Ներսիսեանից 5 ր., Վելիցիխէից՝ տէր-Սիմէօն քահ. Ղազարեանից 79 ր., որից 60 ր. հանգանակված Նիկ. Տէր-Մովսիսեանի տանը, իսկ 19 ր. Բուղդան Վասիլեանի տանը կնունքին, Ցակոբ Էհրաճեանից 10 ր. նոյեմբերի 1-ին (№ 0500 անդորրագրով), որ վրիպել է «Մշակի» № 245-ում նոյեմբ. 5-ի տպված ցուցակից:

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՆՈՒՄ

—

Վանից գրում են «Վան-Տոսպ» շաբաթաթերթին հետեւեալը.

«Քաղաքի մէջ և շրջակաները կան մօտ 6000 վերադարձողներ. կան բաւականին ընտանիքներ: Կենսական մթերքներն շատ քիչ բան կը ճարուի: Քաղաքին մէջ հաւաքելը սկսած է. փողոցները կը մաքրուին: Ոստիկանական չորս շրջաններ կազմուած են: Թալանին վերջ տալու նպատակով պ. Տէրմէն խիստ յայտարարութիւն ըրած է: Վան վերադարձողներէն շատերը, որոնք իրենց գոյքերը փոխադրելու համար հոս եկած էին, ձեռնունայն մնացին, որովհետև իրենց պահարանները բացուեր և կողոպտուեր էին, իսկ ոմանք ալ կը սպասեն ֆուրգոններու, բեռնատարներու, որոնք չեն ճարուիր: Հնձող մեքենաներ կան, որոնք կաշխատին: 4—5 ջրաղացներ սկսած են

ժանել. փուռ ալ բացուած է։ Երկրապահներու խումբի ներկայութիւնը մեծ մխիթարութիւն է ժողովրդի համար։ Սակայն այստեղ կան գործչլի տիպեր, որոնք կուզեն շարունակել իրենց չարաշահութիւնները»։

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Շաբաթ, նոյեմբերի 28-ին, Գայիանեան դպրոցում տեղի ունեցաւ Կարապետ եպիսկոպոսի աշակերտների և յարգողների խորհրդակցութիւնը այն մասին, թէ ինչպէս յաւերժացնեն հանգուցեալի յիշատակը։ Ժողովը, որին նախագահում էր Մ. Բերբերեան, որոշեց հրատարակել հանգուցեալի անտիպ աշխատութիւններից մի քանիսը առանձին գրքով, որի անհրաժեշտ ծախքերը հոգալու համար ընտրվեց մի առանձին յանձնաժողով, որի մէջ մտան Մ. Բերբերեան, Մ. Խոստիկեան, Արտ. Աբեղեան, Ս. Ք. Սահակեան և Ստ. Կանայեան։

Կիրակի, նոյեմբերի 29-ին, Վանքի եկեղեցում, պատարագից յետոյ, հոգեհանգիստ կատարվեց Կարապետ եպիսկոպոսի յիշատակին։ Հոգեհանգստին ներկայ էր խուռն բազմութիւն. այդտեղ էր նաև Բագուից նոր վերադարձած Մեսրոպ եպիսկոպոսը։ Հոգեհանգստից առաջ ճառ խօսեց Ցովնանեան դպրոցի ուսուցիչ և հանգուցեալի աշակերտ Մ. Խոստիկեան։

Նոյեմբերի 27-ին, ուրբաթ, Սալօնի հերթական jour-fixe-ը նուիրված էր Կարապետ եպիսկոպոսի յիշատակին։ Եկել էր բաւական մեծ թւով հասարակութիւն։ Տեղի ունեցաւ զրոյց Հ. Առաքելեանի նախագահութեամբ, որ ժողովը բանալով՝ խնդրեց հանգուցեալին մօտիկ ճանաչող անձնաւորութիւններին խօսել այդ առիթով։ Հետզհետէ խօսեցին Գարեգին վարդապետ, Ստ. Կանայեան, Մ. Խոստիկեան, Խաչեան քահանայ, Ս. Թառայեան և Աշոտ Աթմասեան, հանգուցեալին բնորոշելով որպէս գիտնական, որպէս հոգևորական, ուսուցիչ և մարդ։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նոյեմբերի 27-ից Թիֆլիսի շրջանային դատարանում քննվեց Թիֆլիսի և բելգիական անօնիմ ընկ. գործը, որ յարուցել է քաղաքը էլեկտրաքարշը գնելու մասին ըստ իրանց մէջ ունեցած պայմանագրի։

Քաղաքի շահերը պաշտպանում էին երդւ.-հաւատարմատարներ Ն. Վ. Տեսլենկօ (Մոսկվայից), Պ. Ա. Քալանթարեան, Ս. Դ. Ջափարիձէ և Ց. Ամիրխանեան, իսկ էլեկտրաքարշինը՝ երդ.-հաւատ. Գ. Մ. Սեգալ և Ռոստովից եկած Լ. Ծ. Լոլինշտէյն և Վ. Ս. Շարֆ։

Գործի էութիւնը հետևեալն է.

1900 թ. մարտի 14-ին Թիֆլիսի քաղ. վարչութիւնը պայման է կապում բելգիական անօնիմ ընկ. հետ, որի համաձայն այդ ընկերութեանն է յանձնվում Թիֆլիսի ձիաքարշի գծերի և էլեկտրաքարշի կառուցելի գծերի շահագործումը։ Պայմանագիրը կապելու օրից ընկերութեանը շահագործման մինչեւ էր տրվում 31 տարի 8 ամիս և 5 օր, այսինքն մինչև 1931 թ. նոյեմբերի 31-ը։ Այս ժամանակամիջոցն անցնելուց յետոյ՝ էլեկտրաքարշը քաղաքին պիտի յանձնվի առանց վարձատրութեան։ Սակայն պայմանագրի § 52-ի համաձայն՝ քաղաքը իրաւունք ունի, առանց վերև յիշված ժամանակամիջոցին սպասելու, պայմանագիրը կապելուց 15 տարի անցնելուց, ամեն ժամանակ, մի տարի առաջուց յայտնելով, էլեկտրաքարշն ամբողջապէս վերցնել իր ձեռքը, տալով ընկերութեանն այն գումարը, ինչ որ ընկերութիւնը միջին թւով կարող էր ստանալ այդ մնացեալ տարիներում, հաշւելով վերջին 5 տարվայ եկամուտից, ըստ որում այդ գումարը պէտք է վճարէր իւրաքանչիւր-տարվայ վերջին, մինչև կօնցեսիայի ժամանակամիջոցը։

Պայմանագրի վերև յիշված §-ի համաձայն, քաղաքը ցանկանալով 1915 թ. մարտի 15-ին գնել էլեկտրաքարշը՝ դեռ 1913 թ. մայիսի 2-ին որոշեց յայտնել բելգիական անօնիմ ընկ., որ քաղաքը իր ձեռքն է վերցնում էլեկտրաքարշի ձեռնարկութիւնը և գնման երկու միջոցներից ընտրել է այն, որ իւրաքանչիւր տարվայ վերջում վճարի միջին թւով գումար՝ 5 տարվայ եկամուտի հաշւով։

Քաղաքն իր այս դիմումը կրկնել է մի քանի անգամ, սակայն անօնիմ ընկ. լիազօր Վան-Ռուս զանազան պատրվակներով հրաժարվել է քաղաքին յանձնել էլեկտրաքարշի ձեռնարկութիւնը։

Այժմ քաղաքը, մի միլիօն րուբլու պահանջ ներկայացնելով, խնդրում է շրջանային դատարանին՝ 1915 թ. մարտի 15-ից սկսած էլեկտրաքարշի իրաւունքը ճանաչել քաղաքի կողմը և նոյն ժամանակից սկսած՝ էլեկտրաքարշի ղեկը պիտի տալ քաղաքին, յանձնելով միաժամանակ էլեկտրաքարշը իր ամբողջ գոյքով։

Քաղաքի պահանջի առիթով, անօնիմ ընկ. իր բացատրութեան մէջ յայտնում է, որ ինքը ոչնչով չի խախտել քաղաքի շահերը և քաղաքի պահանջը, 1915 թ. մարտի 15-ից էլեկտրաքարշը իր ձեռքն առնելու մասին, անհաւասար է։ Գնման իրաւունքը, իր նաթեամբ է օրէնքով կամ պայմանագրով սահմանված որևէ մէկի իրաւունքը՝ պահանջել իրան սեփականութիւն որևէ գոյք, փոխարէնը որոշ գնման գնի, և միայն նա, ով առաջարկում է այդպիսի գին, իրաւունք ունի ձեռք բերել մի գոյք գնումով։ Գնման այս իրաւունքը կարող է իրագործվել գընման արդարացի գնի առաջարկութեամբ։ Քաղաքը այս պարտականութիւնը չի կատարել, չի առաջարկել ոչ մի էկվիվալենտ։ Բացի այդ, քաղաքը չի կատարել և իր կարևոր պարտականութիւններից մի ուրիշը, որ կապված է գնման հետ, այն է՝ չի վճարել անօնիմ ընկ. ստացած աւանսի (600,000 ր. չափ) անշիջելի մասը, որ կազմում է 440,953 ր. 99 կ., որպիսի գումարը դումայի որոշումով պէտք է վճարէր էլեկտրաքարշը փաստապէս գնելուց յետոյ։ Այս հիմունքներով բելգիական անօնիմ ընկ. խնդրում է դատարանին մերժել քաղաքի պահանջը։

Դատավճիռը կը տանք դատը աւարտվելուց յետոյ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Հայկական Բիւրօն, որ կոչվում է ոմանց կողմից «ազգային», ներկայումս կատարեալ կազմալուծման վիճակի է ենթարկված։ Նա, ինչպէս յայտնի է, նախագահ չունի և այդ պաշտօնը կատարում էր փոխ-նախագահ Ց. Խանոյեանց, որ հրաժարական է տուել։ Հրաժարական են տուել նաև մի քանի անձինք (գանձապահ Մ. Քալանթարեան և այլք). մի քանիսն էլ բնաւ չեն յաճախում։ Պետական Դումայի անդամ Մ. Պապաջանեան աշխատում է վերակազմել Բիւրօն այնպիսի հիմունքներով, որ նա փոքր ի շատէ գոնէ լինի արտայայտիչ հասարակական լայն խաւերի և հոսանքների։ Մենք չենք կարծում, որ նրա այդ ազնիւ ջանքերն աջողութեամբ պսակվեն, ի նկատի ունենալով որ Բիւրօյում մինչև այժմ տիրող որոշ հոսանքը միշտ խոչընդոտ է հանդիսացել այդ ուղղութեան։

◆ Իշխ. Օրլովի՝ Փոխարքայի օգնական նշանակվելու առիթով, Մեսրոպ եպիսկոպոսը Բագուից իշխ. Օրլովին ուղարկել է հետևեալ հեռագիրը. «Ուշ իմացայ ձեր պայծառափայլութեան՝ Փոխարքայի օգնական նշանակվելու մասին։ Բացակայելով, չեմ կարող անձամբ յայտնել իմ ուրախութիւնը։ Հեռագրով յայտնում եմ ձեզ իմ սրտագին շնորհաւորանքները, աղօթելով Աստուծուն, որ ձեր պայծառափայլութեանը այժմ և առողջութիւն տայ՝ Թագաւորին և Մեծ Ռուսաստանին ծառայելու, բայց ըստ ամենայնի բարեխնամ ծառայութեան համար»։ Այս հեռագրին ի պատասխան Մեսրոպ եպիսկոպոսը իշխ. Օրլովից ստացել է հետևեալ հեռագիրը. «Խորապէս յուզված եմ ձեր շնորհաւորանքներից, սրբազան, և սրտագին շնորհակալ եմ բարի ցանկութիւնների համար։ Կովկասեան հրաշալի երկրին ծառայելու հնարաւորութիւնն ինձ այժմ կը տայ ամեն ջանք և սիրտ դնելու ինձ յանձնված Թանգագին գործի աջողութեան համար։ Բաղդաւոր կը լինեմ, եթէ Տէրը օրհնի ինձ՝ կարողութեան չափ կատարելու այդ գործը»։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, Գրական-Գեղարվեստական Սալօնում նշանակված է հոգեհանգիստ նորոգ հանգուցեալ Սեդրաք Մանդինեանի յիշատակին։

◆ Թիֆլիսում նոյեմբերի 29-ից սկսել է հրատարակվել «Վան-Տոսպ» անունով մի նոր շաբաթաթերթ՝ հասարակական, քաղաքական, գրական ուղղութեամբ և ղեկավարութեամբ Վանի սահմանադիր-ռամկավար այժմերի։ Թերթի պաշտօնական խմբագիր-հրատարակիչն է Տ. Նազարեան։ Նոր շաբաթաթերթը իր բովանդակութեամբ թողնում է լուրջ գրական օրգանի տպաւորութիւն։ Մի այդպիսի օրգանի հրատարակութիւնը թիւրքահայ այնպիսի մտաւորականների ձեռքով, որոնք հակառակ են արկածախնդրական ուղղութեան, որով, ցաւ ի սիրտ պէտք է ասել, համակված է թիւրքահայ անփորձ և թեթևս երիտասարդութիւնը, աւելի քան անհրաժեշտ էր։ Եւ մենք ողջունում ենք համակրանքով նոր շաբաթաթերթի երեւումը և մաղթում ենք աջողութիւն։

◆ Թշնամու դէմ կռւում աչքի ընկնելու պատճառով պարգևի են արժանացել հետևեալ հայ զօրականները. ս. Աննա 3-դ աստիճանի շքանշան են ստացել ենթ-գնդապետ Գէորգ Մելիք-Մնացականեան, պրապօրշչիկ Լևոն Տէր-Ցովսէփեան և պօրուչիկ Ոսկանեան, Ստանիսլաւ 2-դ աստիճ.՝ կապիտան Սօլոմօն Մելիք-Փարսադանեան, Ստանիսլաւ 3-դ աստիճ., պրապօրշչիկներ Գէորգ Ղորղանեան, Տիգրան Վարդապետեան և Արուշանեան։

◆ Նահանգապետը թոյլատրել է Ցովհաննէս Սարգսեանին Թիֆլիսում հրատարակել հասարակական-գրական և քաղաքական շաբաթաթերթ «Պայքար» անունով։

◆ Պարենաւորման գործի առանձին խորհրդակցութեան նախագահի լիազօր Կ. Ի. Շաշկօվսկին այս օրերս մեկնում է Ռոստով՝ երկաթուղային գծերի դրութեան հետ ծանօթանալու և իմանալու, թէ ինչ միջոցներ են հարկաւոր պարենաւորման մթերքները Թիֆլիս հասցնելու համար։

◆ Թիֆլիսի քաղ. ինքնավարութեան միջնորդութիւնը՝ պարենաւորման գործի համար 2½ միլիօն նպաստ տալու՝ արդէն քննվում է մինիստրների խորհրդի մէջ։

◆ Խոշոր ալիւրավաճառ Մ. Տէր-Բաղդասարեանը տեղական շուկայում թխողներին վաճառել էր երկու վագօն զանազան տեսակի ալիւր, իւրաքանչիւր մէշօկը 17 ր. 50 կ., 17 ր. 75 կ., այդպիսով նրանցից ստանալով 1247 ր. 20 կ. աւելի փող։ Երևան հանելով այս դէպքը, ոստիկանապետ Զդանօվսկին այդ աւել գումարը ետ առաւ և բաժանեց շաքարահաց թխողների մէջ, իսկ իրան՝ Տէր-Բաղդասարեանին այժմ ենթարկում է պատասխանատւութեան՝ վարչական կարգով, միջնորդելով որ նա 3000 ր. տուգանքի ենթարկվի։

◆ Կիրակի օրը փակվեց Գեղարուեստի Արևելեան Կովկասեան Ընկ. պատկերահանդէսը։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Н. В.»-ն հաղորդում է, որ այս օրերս ներքին գործերի մինիստրը մեծ ճանապարհորդութեան է ձեռնարկելու Ռուսաստանում՝ ծանօթանալու համար նահանգապետների գործունէութեան հետ մատակարարական գործի և թանգութեան ու գերմանական ազդեցութեան դէմ պայքար մղելու նկատմամբ։

◆ Մոսկվայում մայիսեան անկարգութիւնների ժամանակ վնասված ֆիրմաները գանգատ են ներկայացրել սենատին, ապացուցելով որ Մոսկվայի քաղաքապետ գեներալ Ադրիանովը և ընդհանուր կառավարիչ իշխ. Իւսուպովը եղել են անգործ, անկարգութիւնների ժամանակ։

◆ Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ Մոսկվայում քաղաքացի ազգաբնակութեան թիւն է 1,950,000։ Փախստականները մօտ 150,000 են։ Իսկ Պետրօգրադում ազգաբնակութեան թիւն է, բացի զօրքերից, 2,300,000։ Վերջին 5 տարում աւելացել են մօտ 400 հազար հոգի։

◆ Նիժնի Նովգօրոդում գումարված ատամնաբուժների համագումարը հեռագրեր ուղարկեց Պետական Խորհրդի և Դումայի նախագահներին՝ պաշտպանելով նրանց և յայտնելով, որ նրանց գործունէութիւնը յարգելի է։ Ադրիան վարդապետը ասաց, որ պատերազմ սկսեցին «Սիօնի խելօք իմաստունները», որպէս զի Ռուսաստանի ուշադրութիւնը շեղեն հրէաներից, որոնք վարկաբեկեցին իրանց Իւշչինսկիի սպանութեամբ։

◆ Սպիտակ տամսեր ունեցողների հարցը քննող մասնաժողովը, ինչպէս հեռագրում է «Каспій»-ի թղթակիցը Պետրօգրադից, վճռել է բժշկական ստուգիչ քննութեան ենթարկել առաջին հերթին մինչև 43 տարեկան օֆիցերներին, բժիշկներին և ֆելդշերներին, յետոյ զինւորներին մինչև 1910 թւի զինւորակոչութիւնը։ Կրկնաքննութիւնը կը սկսվի դեկտեմբերի կէսից։

◆ Զինւորական վարչութիւնը պահանջել է երեք տարին դասընթացքների ուսանողների ցուցակը։

◆ Նիժնի-Նովգօրոդի աշակերտանների համագումարը բոլոր գոյութիւնը դաւել է «կրթարանքը»՝ Ռուսաստանի համար։

◆ Հիւանդացել է ներքին գործերի մինիստր Խվօստովը և դժուար թէ ձեռնարկի իր նախագծած ճանապարհորդութեանը։

◆ Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ Պետական Դուման գումարվելու է դեկտեմբերի կէսին։

◆ «У. Р.»-ն հաղորդում է, որ 1907, 1908 և 1909 թ. թ. երկրորդ կարգի երկրապահները զէնքի են կանչվելու դեկտեմբերի կէսին կամ վերջերին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց Գիմնազ. Ընկ. վարչութեանը Մեսխեթ գիւղից դիմել են, որպէս զի այնտեղ բացվի ոստայնագործութեան դպրոց։

◆ Սազարէջօ և Գիորգի-Ծմինդա գիւղերի հասարակութիւնները 15 դեսեատին հողամասին ձրիաբար դրել են Վրաց Գիւղատնտեսական Ընկ. տրամադրութեան տակ՝ ցուցադաշտ և փորձադաշտ հիմնելու նպատակով։

◆ Գորի քաղաքում գոյութիւն ունեցող վրաց կանանց «Մանդէլօսանի» (կին) ընկերութիւնը, ըստ «Սաքարթ.» լրագրի, հիմնել է կօօպերատիվ միութիւն, բաց է արել թէյարան, իսկ այժմ նպատակ ունի հիմնել նաև մի դպրոց, դպրոցից դուրս մնացածներին կրթութիւն տալու յատուկ նպատակով։ Նոյն ընկ. ճիւղը հիմնվում է Սուրամում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովարանի բեմի վրա նոյեմբերի 28-ի երեկոյեան հայ դրամատիկական ընկերակցութիւնը ներկայացրեց Բրակկօյի «Փոքրիկ կեանքի պատմութիւնը» 4 արար. բանաստեղծութիւնը՝ Աւ. Եղեկեանի թարգմանութեամբ։

Այս պիէսը արդէն երկուշաբթի օրը դեռ բատանական խումբը բեմ էր հանել իր հերթական ներկայացմանը Արտիստական Ընկ. թատրոնում։

Պիէսի համեմատական աջողութիւնը, ըստ մեզ, պայմանաւորվում է երկու պահանջով. որ պիէսը ներկայացվի շքեղ բեմայարդարումով և որ պիէսի գլխաւոր գործող անձինք խնամքով ու պատշաճ առողջութեամբ արտասանեն իրանց դերերի խորհրդաւոր մտքերը։

Հարկաւ Ժողովարանի բեմը միանգամայն ներհակ է առաջին պահանջին։ Իսկ ինչ վերաբերում է պիէսի կենտրոնական դերակատարներ Սևումեան ամուսիններին (բանաստեղծ Սանֆանօ և նրա կին Թերեզա), տ. Սիրանոյշին (իշխանուհի Ջեյլէբ) և Ալիխանեանին (Վալենտինօ), չորսն էլ դեղերել էին իրանց դերերի ներքին ըմբռնման և ըստ [illegible] բաւարար [illegible] թեամբ խաղացին [illegible] տիր լեզուով, որ ինքնին մի շէդէօվր է հայ թարգմանական գրականութեան մէջ։

Տիկ. Սևումեան խուսափելու է դարձուածքները երգի ձևով արտասանելուց, իսկ տիկ. Սիրանոյշը ուշք է դարձնելու բառերի վերջաւորութեան վրա, որոնք երբեմն չեն լսվում [illegible]։ Մի մավում, նոյնիսկ առաջին [illegible] դալու մտերմութիւնը չը վրիպեց մեր աչքից։ Երկրորդ գործողութեան մէջ արդյոք Թերեզան յանձնում է Վալենտինոյին ի միջի այլոց 110 լիրա. ի հարկէ, պ. բեմխօսը կամ տիկ. Սևումեան պէտք է հասկացողութիւն ունենան լիրայի ձևի, քանակի կամ չափի մասին։ Բայց տիկ. Սևումեանը այդ 110 լիրան յանձնեց Ալիխանեանին ինչ-որ կօպէկանոց մեծութեան դրամով և Ալիխանեանն էլ դրեց գրպանից հանած փոքրիկ քսակի մէջ։

Այն էլ ասենք, որ «Փոքրիկ կեանքի պատմութեան» նման ծանր պիէսները մի տեսակ դժուարամարս կերակուր են Ժողովարանի անդամների համար։ Բեյէնդէնտ

Արքունական թատրոնում կիրակի երեկոյեան, նոյ. 29-ին, երկրորդ անգամ օպերային խումբը ներկայացրեց «Աֆրիկական», որ անցաւ շատ աջող շնորհիւ խմբի առաջնակարգ ույժեր տիկ. Բրունի, պ. պ. Մոսինի և Պոլեայեվի։

Այսօր նշանակված է տաղանդաւոր տենօր Մոսինի բենեֆիսը, որի առիթով կը ներկայացվի «Պիկօվայա դամա» օպերան։ Մոսինի անունը գրաւական է ներկայացման կատարեալ աջողութեան։

Խմբագիր-հրատարակիչ՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐ...

Ղշլաղ, 8 նոյեմբերի

Գիւղիս ծխական դպրոցի հոգաբարձական խորհուրդը ստանալով համադրա... Վասիլ Մաքթեանից, ի յիշատակ իր ... գուցեալ մօր, 10 րուբլի և նախկին եր... փոխ Վիրապ Սամուէլեանի ժառանգներ... Աւագ Սամուէլեանից և Ջիմշուդ Գիմ...նից՝ 15 ր. նուիրաբերում՝ յայտնում է ... բոյիշեալ պարոններին իր շնորհակալութի...

Նախագահ՝ Աբգար Տէր-Մկրտչեա...

Անդամ-քարտուղար՝ Մ. Ղազարեա...

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂ...

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 0 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 9 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈ...

Բժշկ. Բ. Նաւասարդեա...

Հիմնված 1880 թ.

(Պուշկին., Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշ...կան խորհրդակցութեամբ՝ առ. 11—12

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12½ ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և ... խայից հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Ս. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ., կնոջ. ... բժ. երեխայից ներքին և հիւ. և ծաղկահատ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համալսարանի ուսանողների և սպայ... համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեա...
1. 0—20...

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРОЙ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО,
ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.
ВЕРХНІЙ ЭТАЖЪ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1916 Թ.
„ՇԻՐԱԿ"
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
XVIII տարի

Պատի օրացոյցի մէջ տպագրված են Թագաւորների, հասարակապետութեանց նախագահների, գլխաւոր բանակների, հայ մարտիկների, հասարակական գրական գործիչների պատկերներ։ Պետութիւնների բարեխ... վիճակագրական տեղեկութիւններ, պետական կազմը, ցամաքային և ծովային ույժերը, ... պատմութիւնից հատուածներ։ Երեխաների դաստիարակութեան վերաբերեալ խրատներ։ Ազգային աշուղական խաղեր, զուարճալի պատմութիւններ, տնային տնտեսութեան, առողջապահութեան և ... կութեան վերաբերեալ օգտակար գիտելիքներ, ... մերեր և աֆօրիզմներ, ժողովրդական երգեր, ... դաշտի առակներ և բազմաթիւ հետաքրքրական տեղեկութիւններ։

ԾՈՑԻՆԸ պատրաստված է 10 գոյնով. 1. Հայ ... երգումը, 2. Հայի ագին, 3. Վերածն... 4. Անդրանիկ։

—o—

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ
(Հարուստ երազահանով)

Ցանկը, բացի սովորական տեղեկութիւններից, պարունակում է վիճակագրութիւն երկրագնդի բոլոր պետութիւնների, նրանց պետական կազմի, ծովային և ցամաքային ույժերի, ... բնակութիւնը, պետական ... և մուտքը, ... և այլն, իրանց թագաւորների կամ ... խազահների պատկերներով։ Վիճակագրութիւն Կովկասի, Թիւրքահայաստանի 6 վիլայէթների և պարսկաստանի։ Բանաստեղծական.—Հայրենիքիս հետ—Յով. Թումանեանի։ Հայրենիքի ձայնը—Ալ. Ծատուրեանի, Դրօշակի հանդէսը—Դր. Ք. Մկրտումեանի։ Պատկերներ—Անդրանիկի, Դրօյի, Վարդանի, Քեռու, Խէչօյի, Համազասպի, ... բաւոր երգը—Ալ. Ծատուրեանի, Հրաժեր աղջիկը—Թարգմ. Արմէնի, Ռաշա-Մարի։ Ազգային ճնշում—... տեղծութիւններ։ Հայ բանաստեղծները և հայրենիքը, բանաստեղծների պատկերներով։ Առողջապահական խորհուրդներ—Հիւանդութիւնների դէմ բժշկական և տնային միջոցներ։ Զանազան ... Կեանք—Փորձ և գործ, վէճ և ուրախութիւն, սէր և ազատութիւն։ Դատական կանոններ, օգտակար գիտելիքներ։ Երազահան—Լաւսնի երազացոյց, դիմագիտութիւն և վիճակագիրներ։ Գրքերի թիւը 40։

Գները՝ Պատինը—70 կ., Ծոցինը՝ 30 կ.։ Գումարով գնողներին զեղչ։ Առանց կանխավճարի ոչ ոքի չի ուղարկվի։

Դիմել՝ Александрополь, типографія «ШИРАКЪ» Карапету Апинянъ. Արտասահմանից՝ Alexandrople, Karapet Apinian (Caucase). (Ե.) 867. 6—1

НОВОЕ ИЗОБРѢТЕНІЕ ВЪ АМЕРИКѢ.

Въ столицѣ новаго міра Нью-Іоркѣ М. Деламуремъ изобрѣтено самое радикальное средство „Рапидъ" для полнаго излеченія остраго и хроническаго Триппера (Гонорреи).
Въ настоящее время въ лучшихъ клиникахъ и санаторіяхъ цивилизованныхъ странъ Америки и Европы для излеченія Триппера (Гонорреи) какъ остраго такъ и самаго застарелаго хроническаго, извѣстные врачи, профессора и специалисты примѣняютъ составъ „Рапидъ" изобрѣтенный М. Деламуремъ. „Рапидъ"-разрѣшенъ Россійскимъ Главнымъ Медицинскимъ Управленіемъ за № 1295.
Курсъ леченія при самыхъ застарелыхъ случаяхъ три недѣли, два двойныхъ флакона и коробка пилюль, прилагается способъ употребленія на всѣхъ мѣстныхъ языкахъ. Каждый больной можетъ у себя дома лечиться безъ посторонней помощи, въ тайнѣ. Цѣна за одинъ флаконъ 5 руб. полный курсъ леченія 2 двойныхъ флакона и коробка пилюль 9 руб. въ провинцію меньше двухъ флаконовъ не высылается. Налож. плат. высылается только по полученіи задатка 3 руб.
Избѣгайте недоброкачественныхъ и вредныхъ для здоровья поддѣлокъ и подражаній.
Исключительный складъ для всего Кавказа, въ Кавказскомъ отдѣленіи Московской Лабораторіи М. Деламуре, Тифлисъ, Эриванская площадь Пушкинская 3. д. Кредитнаго О-ва верхній этажъ.
Всѣмъ лазаретамъ, госпиталямъ аптекамъ и аптекарскимъ складамъ отпускается со скидкой, не менѣе 5 коробокъ.

(Ե.) 50—12

Իւզովկայի հայոց աղօթատան ... մար հարկաւոր է փորձառու, աջող ձայնով, երիտասարդ

ՏԻՐԱՑՈՒ։

Պայմանները՝ 500 ր. արդիւնք և 5 ր. ... եակի վարձ։ Դիմել ինձ. Юзовка, (Екатер. губ.) հայոց քահանային։
Կարապետ ք. Դանիէլեան
870. 4—1

ՎԱՆԻ Նորքում գաւառացի Համբարձում Մարգարեանին կամ նորա Մկրտչին (այժմ կամաւոր) կը խնդրեմ ... ւանալու համար, դիմել ... ցէնիս՝ Պետրոս Ս. Մխեեան, Нахичевань н./Д. 31-я линія, домъ № 56—24.
871. 1—

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.